# ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

42ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 45 (2095) ՇԱԲԱԹ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 3, 2022
VOLUME 42, NO. 45 (2095) SATURDAY DECEMBER 3, 2022

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

## Ամուլսարի Դէմ Պայքարողներուն Վարկը Կասկածի Տակ

Բնապահպանութիւնը ու միջավայրի պաշտպանութիւնը կարեւորագոյն մտահոգութիւններ են մարդկութեան համար: Անոնց նկատմամբ անտարբերութիւնը յառաջիկայ սերունդները կրնան զրկել երկիր մոլորակի վրայ առողջ ապրելու մադկային իրաւունքէն: Միջազգային ընտանիքը մեծ ուշադրութիւն կը դարձնէ այս հարցին ու երկիրներ միլիոնաւոր տոլարներու յատկացումներ կը կատարեն՝ պայքարելու համար կլիմայի փոփոխութեան եւ միջավայրի կեղտոտումին դէմ:

Հայաստանի մէջ եւս կան հասարակական կազմակերպութիւններ եւ անհատներ, որոնք կը զբաղին բնապահպանութեան ուղղուած հարցերով, հանրութեան ուշադրութիւնը հրաւիրելով այս կարեւոր հարցին վրայ:

2018-ի համաժողովրդական յեղափոխութենէն ետք, մեծ աղմուկ բարձրացաւ Ամուլսարի ոսկիի հանքին շուրջ եւ խումբ մը բնապահպաններ ամիսներ շարունակ փակ պահելով դէպի հանքավայր տանող ճանապարհը կարողացան ստիպել իշխանութիւններուն, որպէսզի ժամանակաւորապէս դադրեցնէ հանքի շահագործումը: Իսկ կառավարութիւնը մօտ 400 հազար տոլար յատկացում կատարեց, որպէսզի անկախ ուսումնասիրութիւն կատարուի՝ ճշդելու համար հանքի ազդեցութիւնը շրջակայ միջավայրին վրայ: Այդ ուսումնասիրութեան եզրակացութիւնը եղաւ այն, որ հանքի շահագործումով յառաջանալիք վտանգները նուազագոյնն են ու կառավարելի: Այդուհանդերձ, հանքը, որ կրնար հարիւրաւոր միլիոն տոլարներու եկամուտ ապահովել պետութեան, մնաց փակ ու այդպէս ալ կը շարունակուի մինչեւ օրս:

Վերջերս, «Փաստերու Ստուգման Հարթակը» հրապարակեց հետաքննութիւն մը (տես էջ 7), որմէ պարզ կը դառնայ, որ Ամուլսարի դէմ բողոքողներու մէկ մասը անուղղակի կերպով գումարներ ստացած են Հայաստանի խոշորագոյն հանքարդիւնաբերողէն՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային ընկերութենէն:

Ըստ ուսումնասիրութեան, ընկերութեան համասեփականատէր, Սիւնիքի նախկին մարզպետ, ներկայիս ընդդիմադիր «Հայաստան» խմբակցութեան Ազ պատ-

Շար.ը էջ 5

## Պաքուն Պատասխանած Է Խաղաղութեան Պայմանագրի Շուրջ Երեւանի Առաջարկներուն. Միրզոյեան

*Պաշտօնական Պաքուն պատասխանած է խաղաղութեան պայմանագրի նախագիծին շուրջ Երեւանի ներկայացուցած առաջարկներուն: Այս մասին «Արմէնփրես»-ի հետ զրոյցին տեղեկացուցած է Հայաստանի արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեանը՝ չմանրամասնելով, թէ արդեօք Ատրպէյճանը համաձայնա՞ծ, թէ՞ առարկած է Հայաստանի ներկայացուցած տարբերակին:*

*Պաշտօնական Երեւանը առայսօր չէ բացայայտած, թէ ինչ առաջարկներ ներկայացուցած է Պաքուին:*

*«Մենք Ատրպէյճանին ենք ներկայացրել մեր առաջարկները յարաբերութիւնների կարգաւորման կամ խաղաղութեան պայմանագրի նախագծի վերաբերեալ եւ նախօրէին ենք միայն ստացել նրանց պատասխանները: Այսպիսով՝ քննարկումները շարունակւում են: Մենք յոյս ունենք այս հարցում համաձայնութեան հասնել հնարաւորինս շուտ, եւ այս գործընթացում կարեւոր դերակատարութիւն կարող են ունենալ նաեւ մեր միջազգային գործընկերների միջնորդական ջանքերը», ըսած է Միրզոյեան:*

*Անդրադառնալով Ատրպէյճանի նախագահին յայտարարութեան,*



Հայաստանի արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեան

*թէ Հայաստանի վարչապետը հրաժարած է մասնակցելէ յաջորդ ամիս Պրիւքսէլի մէջ նախատեսուած եռակողմ հանդիպման, Հայաստանի արտաքին գերատեսչութեան ղեկավարը վերահաստատած է Երեւանի յանձնառութիւնը՝ մասնակցելու այդ հանդիպման:*

*«Փրակայում տեղի ունեցած քառակողմ հանդիպման ժամանակ պայմանաւորուածութիւն էր ձեռք բերուել յաջորդ հանդիպման վե-*

Շար.ը էջ 6

## «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի Թելեթոնի Ընթացքին Հանգանակուած Է 11 Միլիոն Տոլար




*«Մենք կը ստեղծենք կենսունակ համայնքներ» խորագրի ներքոյ Նոյեմբեր 24-ին տեղի ունեցած է «Հայաստան» համահայկական հիմնադրամի (ՀՀՀ) 25-րդ հեռուստամարաթոնը, որուն ընթացքին այս պահի դրութեամբ հաւաքագրուած է 11.003.439,51 տոլար:*

*Հիմնադրամի գրասենեակէն յայտնած են, որ դրամահաւաքմիջոցառումները դեռ կը շարունակուին, իսկ վերջնական արդիւնքները պիտի ամփոփուին տարեվերջին:*

*«Հեռուստամարաթոն 2022»-ի ծիրին մէջ Հայաստանէն եւ Արցախէն հանգանակուած է 1.000.280,51 տոլար, ԱՄՆ-ի Տեղական Մարմինը հաւաքագրած է 5.000.250 տոլար, Ֆրանսայի Տեղական Մարմինը՝ 3.284.000 տոլար, Բրիտանիոյ Տեղական Մար-*

Շար.ը էջ 5

## Պրիւքսէլը Չէ Հրաժարած Փաշինեանի ու Ալիեւի Մասնակցութեամբ Քառակողմ Հանդիպման Գաղափարէն

*Պրիւքսէլը չէ հրաժարած Հայաստանի, Ատրպէյճանի, Ֆրանսայի ղեկավարներուն ու Եւրոպական Խորհուրդի նախագահին քառակողմ հանդիպումը կազմակերպելու գաղափարէն: Ինչպէս տեղեկացուցած է Եւրոմիութեան մէջ (ԵՄ) «Ազատութեան» դիւանագիտական աղբիւրը, կապի մէջ են երկու կողմերուն հետ՝ նախապատրաստելու նոր հանդիպում: Նախագահ Շարլ Միշէլի համար, «Ազատութեան» աղբիւրին ձեւակերպմամբ, «այդ կարեւոր է»: Բայց բանակցութիւններու յստակ օր դեռ չի նշուիր:*

*Նախօրէին Իլհամ Ալիեւը յայտարարած էր, թէ Պրիւքսէլի մէջ Դեկտեմբեր 7-ին նախատեսուող հանդիպումը տեղի պիտի չունենայ հայկական կողմի դիրքորոշման պատճառով: Շեշտած էր, որ «Փաշինեանը համաձայնած է հանդիպիլ միայն Ֆրանսայի նախագահ Մաքրոնի մասնակցութեամբ: «Այդ կը նշանակէ, որ հանդիպումը տեղի պիտի չունենայ», ըսած էր Ատրպէյճանի նախագահը ու յաւելած, որ Ֆրանսան «հակաատրպէյճանական կողմնակալ դիրքորոշում» որդեգրելու բերումով այլեւս չի կրնար մասնակցիլ հայ-ատրպէյճանական խաղաղութեան գործընթացին:*

*Ալիեւը որպէս Ֆրանսայի հակաատրպէյճանական քաղաքականութեան օրինակներ նշած է Ֆրանսայի խորհրդարանի երկու պալատներու՝ Ծերակոյտի եւ Ազգային Ժողովի ընդունած բանաձեւերը եւ «փորձը Ատրպէյճանին յարձակման ենթարկել Ֆրանքոֆոնի գագաթաժողովին»:*

*Ալիեւի փոխանցմամբ, այդ անընդունելի է, քանի որ Ֆրանքոֆոնի համաժողովը սոսկ մարդասիրական կազմակերպութիւն է:*

*Երեւանը ի պատասխան յայտարարեց, որ պատրաստ է այդ բանակցութիւններուն նախկին ձեւաչափով:*

*Յատուկ յանձնարարութիւններով դեսպան Էտմոն Մարուքեան Թուիթըրեան գրառմամբ պնդած է, որ Ատրպէյճանը Փրակի մէջ համաձայնած է շարունակել հանդիպումը քառակողմ ձեւաչափով:*

*«Տրամաբանական է, որ հանդիպման ձեւաչափը եւ մասնակիցների կազմը պէտք է լինի նոյնը: Այդ իսկ պատճառով մենք յոյս ունենք, որ հանդիպումը տեղի կ՚ունենայ Պրիւքսէլում՝ Էմանուէլ Մաքրոնի եւ Շարլ Միշէլի մասնակցութեամբ», եզրափակած է հայաստանցի պաշտօնեան:*

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# Եթէ 2022-ի ՀԱՊԿ Գագաթնաժողովում «Հարսի Պարը Տապալուեց», Ապա 2016-ԻՆ «Փեսային« «Բան Դէմ Տուեցին»

ՅԵՂԻՆԷ ՄԱՆՈՒԿԵԱՆ

*ՀՀԿ փոխնախագահ Արմէն Աշոտեանը անդրադարձել է ՀԱՊԿ գագաթնաժողովին եւ «Սերժի վախտ» (բնորոշումն իրենն է)՝ 2016-ի Հոկտեմբերին՝ Ապրիլեան պատերազմից ամիսներ անց, տեղի ունեցած ՀԱՊԿ գագաթնաժողովի հետ զուգահեռներ անցկացրել:*

*Նա նախ ֆիքսել է գագաթնաժողովի անցկացման օբկիետը՝ «Դուխն Հոլլ», որտեղ, նրա խօսքով, նաեւ հարսանիքներ են կազմակերպւում: Իսկ եթէ հարսանիք, ապա նաեւ՝ հարս, եթէ հարս, ապա նաեւ հարսի պար: «Եթէ անալոգիայով շարժուենք, ապա հարսի պարը տապալուեց»,- անթաքոյց հրճուանքով յայտարարել է Աշոտեանը՝ նկատի ունենալով այն, որ, ի դէմ Նիկոլ Փաշինեանի, Հայաստանին չյաջողուեց ցանկալի՝ հայանպաստ տեքստ կորզել «կոլեկտիւ անվտանգութեան» կազմակերպութեան անդամներից:*

*Այնուհետեւ Աշոտեանն անցել է 2022-ի ու 2016-ի գագաթնաժողովների միջեւ համեմատականներ անցկացնելուն՝ զուգահեռներ տանելով «լրջութեան ու ջրիկութեան, կազմակերպչական բարձր մակարդակի եւ կիքսերի» միջեւ եւ, իհարկէ, անդրադարձել գագաթնաժողովի բուն՝ բովանդակային կողմին:*

*Քանի որ Աշոտեանը խօսք է բացել «կիքսերի» մասին, ապա այստեղ «ստոպ տանք» եւ մինչեւ գագաթնաժողովների բովանդակային կողմերին անդրադառնալը, մի «կիքսի» մասին յիշեցնենք, որի մասին հանրութիւնը տեղեկացաւ միայն 44-օրեայ պատերազմից յետոյ: Խօսքը 2016-ի գագաթնաժողովի ժամանակ տեղի ունեցած մի արտահոսքի մասին է, երբ ՀԱՊԿ անդամ երկրներից մէկի՝ Բելառուսի նախագահ Լուկաշենկոն Սերժ Սարգսեանի հետ բառի բուն իմաստով «բազար» է անում ԼՂ ազատագրուած կամ, ինչպէս ընդունուած է ասել, բուֆերային գօտի համարուող 7 շրջանը 5 միլիարդի դիմաց Ալիեւին վերադարձնելու շուրջ:*

*Սարգսեանը, ի դէպ, առարկում է Լուկաշենկոյի առաջարկին՝ 5 միլիարդի դիմաց Ատրպէյճանին վերադարձնել 7 շրջան՝ ասելով՝ այդ հողերի համար հայկական կողմը 5 հազար զոհ է տուել՝ նշելով, թէ ինքն էլ 6 միլիարդ է առաջարկում Ալիեւին այդ շրջաններից հրաժարուելու դիմաց:*

*Արձագանքելով Սարգսեան-Լուկաշենկօ աղմկահարոյց ձայնագրութեանը, որը յայտնուել էր տելեգրամեան՝ «Բաղրամեան 26» կոչուող ալիքում՝ Սերժ Սարգսեանի գրասենեակը յայտնել էր. «Հասկանալի չէ, թէ ինչպէ՞ս է դեռեւս 2016թ. Հոկտեմբերի 14-ին Երեւանում կայացած Հաւաքական անվտանգութեան պայմանագրի կազմակերպութեան (ՀԱՊԿ) հաւաքական անվտանգութեան խորհրդի նստաշրջանի՝ նեղ կազմով նախագահների հանդիպման ոչ հրապարակային զրոյցը յայտնուել համացանցում: ՀՀ երրորդ Նախագահի գրասենեակը ձայնագրութեան հրապարակումն ընդունում է որպէս փաստ եւ զերծ է մնում մեկնաբանութիւններից՝ նկատի առնելով այն հանգամանքը, որ փակ ձեւաչափով անցկացուած նիստերը մեկնաբանման ենթակայ չեն, ինչպէս չեն եղել մինչ այժմ»:*

*Միայն այս «կիքսը» բաւական է՝ պատկերացում կազմելու այն մթնոլորտի մասին, որում ընթանում էր ՀԱՊԿ միջոցառումը, եւ այն կարգավիճակը, որում գտնւում էր ՀՀ ղեկավարը, որի հետ, փաստօրէն, սակարկում էին «հող՝ փողի դիմաց» սկզբունքով:*

*Վերադառնալով «հարսի պարի տապալման» մասին Աշոտեանի դիտարկմանը՝ դիմենք անալոգիային եւ արձանագրենք՝ եթէ 2022-ի գագաթնաժողում «տապալուեց հարսի պարը», ապա 2016-ին փեսային «դէմից» «դուխ» տուեցին, ապաեւ՝ «բան դէմ տուեցին»: Ինչ խօսք, աննախանձ վիճակ, որում յայտնուել էր Սարգսեանը: Որքան յիշում ենք, միջոցառումը տեղի էր ունենում «Բաղրամեան 26»-ում՝ նախագահականում:*

*Այժմ անցնենք բուն միջոցառման, Աշոտեանի ասած, բովանդակային կողմին, որն ամփոփուած է գագաթնաժողովում ընդունուած յայտարարութեան (2016 թ.) տեքստում:*

*Աշոտեանը հպարտօրէն շեշտում է, թէ ՀԱՊԿ-ի կազմը չի փոխուել, էլի նոյն դէմքերն են՝ ի դէմս մասնաւորապէս Փութինի, Լուկաշենկոյի, փոխուել է Ղազախստանի նախագահը, որի նախորդը՝ Նազարբաեւը, «աւելի դժուար տիպ» էր, քան գործողը (ի դէպ, 2016-ին Նազարբաեւը չէր ժամանել Երեւան, ներկայ չէր եղել ՀԱՊԿ գագաթնաժողովին՝ մրսածութեան պատճառով), «բայց այդ նոյն դէմքերով կառոյցից 2016-ին ՀՀ-ին յաջողուեց «ստանալ» մի յայտարարութիւն, որով յստակ աջակցութիւն էր յայտնւում ոչ միայն Մինսկի խմբի ձեւաչափին, այլ նաեւ Վիեննայի եւ Սանկտ Պետերբուրգի պայմանաւորուածութիւններին (շփման գծում միջադէպերի հետաքննութեան մեխանիզմի ներդրում, ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի թիմի կարողութիւնների աւելացում): «Այսինքն՝ աջակցութիւն էր յայտնւում Ապրիլեան պատերազմից յետոյ հայկական դիւանագիտութեան յաղթանակներին, նաեւ խօսւում էր այն մասին, որ ԼՂ խնդրի կարգաւորման սկզբունքներից մէկը ինքնորոշման իրաւունքն է»:*

*Ճիշտ է ասում Աշոտեանը, այդ յայտարարութիւնը, որում յղում է արւում միջազգային իրաւունքի, այսպէս ասած, հռչակագրային նորմերին, ընդհանուր առմամբ կարելի է համարել պրոհայկական, բայց կայ մի բայց. խնդիրը ոչ թէ յայտարարութեամբ ամրագրուածի, այլ յայտարարութեան մէջ չամրագրուածի մէջ էր: Զգիտես ինչու՝ փորձառու քաղաքական գործիչ Աշոտեանի ուշադրութիւնից վրիպել է այն հանգամանքը, որ իր գովերգած յայտարարութեան մէջ ՀԱՊԿ-ը խնամքով շրջանցել է Ապրիլեան քառօրեայ պատերազմի թեման, համալիր գնահատականներ չի տուել կատարուածին ու չի մատնանշել ՀՀ-ին լայնամասշտաբ ռազմական գործողութիւնների շէմին կանգնեցրած կողմին՝ Ատրպէյճանին: Հիմա սա դիւանագիտական յաղթանա՞կ էր, թէ՞ դիւանագիտական անճարակութեան ապացոյց:*

*Վերադառնալով Վիեննայի եւ Սանկտ Պետերբուրգի պայմանաւորուածութիւններին, որոնց, ի դէպ, Աշոտեանը շա՜տ է սիրում ամէն անգամ յղում անել եւ Նիկոլ Փաշինեանին մեղադրել հայկական դիւանագիտութեան յաղթանակը ջուրը գցելու համար, ապա դրանք ջուրն էին գցուել ընդունմանը յաջորդած վայրկեանից սկսած: Ասուածի ապացոյցը ԱԳ նախարար Է. Նալբանդեանի՝ Պաքուին ուղղուած գանգատագիրն էր առ այն, որ Ալիեւը չի կատարում «հայկական դիւանագիտութեան յաղթանակով» ամրագրուած պարտաւորութիւնները:*

*ՀԱՊԿ երեւանեան միջոցառումից մէկ տարի անց՝ Եւրոպայի հայկական չորրորդ համագումարում անդրադառնալով Ժընեւում կայացած Սարգսեան-Ալիեւ հանդիպմանը, կրկնելով Մինսկի խմբի համանախագահների եւ Հայաստանի ու Ատրպէյճանի ԱԳ նախարարների համատեղ յայտարարութեան այն միտքը, թէ հանդիպումն անցել է «կառուցողական մթնոլորտում»՝ Նալբանդեանը «կառուցողական» Ատրպէյճանին մեղադրեց 2016թ. Մայիսին եւ Յունիսին Վիեննայի եւ Սանկտ Պետերբուրգի պայմանաւորուածութիւններից հրաժարուելու համար:*

*«Պաքուն հրաժարւում է իրականացնել Վիեննայի եւ Սանկտ Պետերբուրգի պայմանաւորուածութիւնները: Ատրպէյճանը հրաժարւում է վերահաստատել ԼՂ հիմնահարցի կարգաւորման սկզբունքները, որոնք ներկայացրել են համանախագահ երկրները՝ որպէս կարգաւորման հիմք: Մասնաւորապէս, ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառում, ինքնորոշում եւ տարածքային ամբողջականութիւն»,- նշել էր Նալբանդեանը: (2016-ի ՀԱՊԿ գագաթնաժողովի յայտարարութեամբ հպարտացող Աշոտեանի ականջը կանչի):*

*Ի դէպ, Ժընեւի հանդիպման մասին. եթէ Նալբանդեանը դրանից յետոյ գանգատւում էր Ատրպէյճանից, ապա Սերժ Սարգսեանն արդարանում էր Պաքուի առաջ: ՊՆ պաշտպանական ազգային հետազօտական համալսարանում դասախօսութեան ժամանակ ՀՀ նախագահն ահա թէ ինչ ասաց.*

*«Ինձ համար անկեղծօրէն շատ տարօրինակ իրավիճակ է ստեղծուել, երբ Ժընեւեան բանակցութիւններից յետոյ ատրպէյճանական կողմը մի յատուկ չարութեամբ փորձում է շեշտել, որ ես ինչ-որ պայմանաւորուածութիւններ եմ խախտել: Անկեղծօրէն տարօրինակ է, եւ ես մեր յաջորդ հանդիպմանը շատ անհամբեր սպասում եմ, որպէսզի իմ գործընկերոջը հարցնեմ, թէ ի՞նչն է նրանց զայրացրել: Ընդ որում՝ խօսում են մարդիկ, ովքեր, փաստօրէն, ընդհանրապէս տեղեակ չպէտք է լինեն մեր խօսակցութեանը, որովհետեւ մենք երկուսով ենք խօսել, եւ եթէ մենք պայմանաւորուածութիւն ենք ունեցել որեւէ մէկին չասելու, ապա ինչպէս են իր օգնականները կամ, չգիտեմ, տեղակալները եւ այլն, թեմային ծանօթացել: Ձեզ հաւատացնում եմ՝ մեր խօսակցութիւնից ես կէս բառ անգամ որեւէ տեղ չեմ ասել: Իսկ ի՞նչ եմ ասել Շուեյցարիայի հայ համայնքի հետ հանդիպմանը. ես ասել եմ, որ որեւէ հայ ղեկավար չի կարող փաստաթուղթ ստորագրել, որը խաթարելու է ԼՂ-ի անվտանգութիւնը: Սա՝ մէկ: Երկրորդ՝ ես ասել եմ, որ Ղարաբաղն Ատրպէյճանից դուրս պէտք է լինի: Եւ երրորդ՝ ասել եմ, որ Ատրպէյճանի նախագահն էլ է մտահոգուած իր զինուորների անվտանգութեամբ եւ զոհուելով: Այսինքն՝ այստեղ որեւէ նոր բան կա՞յ: Ես կրկնել եմ այն, ինչ 20 տարի ասում եմ, ինչ 25 տարի մենք խօսում ենք: Այսինքն, եթէ որեւէ մէկին թւում էր, թէ եթէ մենք Ժընեւում բանակցել ենք, ասել ենք եւ յայտարարութիւն ենք ընդունել, որ լարուածութիւնը պէտք է թուլանայ, դա չի նշանակում, որ Ղարաբաղի անկախութեան ձգտումն էլ պէտք է թուլանայ: Անկեղծ ասած՝ ինձ համար շատ տարօրինակ է»:*

*Ի դէպ, Վիեննայի եւ Սանկտ Պետերբուրգի բազմաչարչար պայմանաւորուածութիւնները յիշեցնում են Նոյեմբերի 9-ի յայտարարութեան 9-րդ կէտի մեկնաբանութիւնները. Ատրպէյճանն այդ կէտը մեկնաբանում է «Զանգեզուրի միջանցք»-ի համատեքստում, Հայաստանն էլ կոշտ եւ հետեւողականօրէն հերքում միջանցքի մասին պնդումները: Նոյն կերպ էլ Վիեննայի եւ Սանկտ Պետերբուրգի*

Շար.ը էջ 18

Մասիս
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԷՆ
ՎԱՀԷ ԱՋԱՊԱՀԵԱՆ

**MASSIS Weekly**
Organ of **the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
*http://www.massisweekly.com*

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

**ANNUAL SUBSCRIPTION RATES:**
USA $50.00, $100.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
**MASSIS WEEKLY**

## ԼՈՒՐԵՐ

## Պէտք Է Հայաստանը Շնորհաւորենք Այս Տարուան Տնտեսական Ցուցանիշերու Առումով. ԱԶԴ Գլխաւոր Տնօրէն

Ասիական Զարգացման Դրամատան կեդրոնական եւ Արեւմտեան Ասիոյ հարցով գլխաւոր տնօրէն Եւկենի Ժուքովը կը նկատէ, որ Ուքրանիոյ մէջ ստեղծուած իրավիճակով պայմանաւորուած՝ դէպի Հայաստան դրամագլուխի, մասնագիտական կարողութիւններու մեծ ներհոսք կայ, իսկ այս տարուան առաջին 10 ամսուան արդիւնքով արձանագրուած տնտեսական աշխուժութեան ցուցանիշի առիթով կը շնորհաւորէ Հայաստանը: Ժուքովը այս մասին ըսաւ Երեւանի մէջ կայացած ճեպազրոյցին՝ «Արմէնփրես»-ի հարցին ի պատասխան:


Ասիական Զարգացման Դրամատան տնօրէն Եւկենի Ժուքովի ասուլիսը Երեւանի մէջ

Ան նկատեց, որ այս տարուան սկիզբը, երբ Ուքրանիոյ մէջ սկսան ռազմական գործողութիւնները, այնպիսի գործընկերներ, ինչպիսիք են Արժոյթի Միջազգային Հիմնադրամը, Համաշխարհային Դրամատունը, Ասիական Զարգացման Դրամատունը, շատ մռայլ կանխատեսումներ կ'ընէին այս տարուան համաշխարհային տնտեսութեան հետ կապուած: «Բայց տարուան ընթացքին ոչ միայն Հայաստանի, այլ նաեւ ամբողջ աշխարհի մէջ տնտեսական իրավիճակը շատ աւելի լաւ էր, քան կը կանխատեսուէր», նշեց Ասիական Զարգացման Դրամատան կեդրոնական եւ Արեւմտեան Ասիոյ հարցով գլխաւոր տնօրէնը:

Ժուքով ընդգծեց, որ գուցէ տարօրինակ հնչէ, բայց Հայաստանը եւ դրացի երկիրները որոշակի առումով օգտուեցան Ուքրանիոյ մէջ ռազմական գործողութիւններէն՝ նշելով Հայաստանի մէջ դրամագլուխի, ինչպէս նաեւ մասնագիտական կարողութիւններու նշանակալի ներհոսքի, որոշակի ընկերութիւններու՝ Հայաստան տեղափոխուելու մասին:

Անդրադառնալով դիտարկման, որ հրապարակուած վերջին ցուցանիշերուն համաձայն՝ Հայաստանի տնտեսական աշխուժութեան ցուցանիշը 10 ամսուան մէջ աճած է 14.5 տոկոսով, Ժուքով ըսաւ. «Հաշուի առնելով այն թիւերը, որ ներկայացուցիք, պէտք է Հայաստանը շնորհաւորենք այս տարուան տնտեսական ցուցանիշերուն առումով: Սակայն «ստորջրեայ» վտանգներ կան: Այս ազդեցութիւնը մշտակա՞ն է, թէ՞ ժամանակաւոր. Կը կարծեմ, թէ որոշ վերլուծաբաններ կրնան փաստարկներ ներկայացնել, որ այս ազդեցութիւնը ընդամէնը մէկանգամեայ կրնայ ըլլալ: Մենք բոլորս կը կարծենք, որ ՀՀ կառավարութիւնը պէտք է շարունակէ բարեփոխումներու գործընթացը՝ երաշխաւորելու, որ տնտեսական աճը շարունակուի»:

## Պետական Պահպանութեան Ծառայութիւնը Պիտի Անցնի Վարչապետի Ենթակայութեան

Պետական Պահպանութեան Ծառայութիւնը Ազգային Անվտանգութեան Ծառայութենէն պիտի անցնի վարչապետ Փաշինեանի ուղիղ ենթակայութեան տակ կառավարութեան նիստին հաստատուեցաւ նախագիծը:

Պետական բարձրաստիճան պաշտօնեաներու եւ կարեւորագոյն կառոյցներու պաշտպանութիւնը վարչապետի ղեկավարման ներքոյ տեղափոխելը, ըստ Փաշինեանի բացատրութեան, Ազգային Անվտանգութեան Ծառայութեան ծանրաբեռնուածութիւնը թեթեւցնելու նպատակով է:

«Շատ կարեւոր բարեփոխում եմ համարում, այո՛, Պետական Պահպանութեան Ծառայութիւնը դառնում է վարչապետին ենթակայ մարմին: Եկել ենք եզրակացութեան, որ արժի այսպիսի փոփոխութիւն անել, այդ թւում՝ Ազգային Անվտանգութեան Ծառայութեանն իր բուն գործառոյթների վրայ կեդրոնացնելու հնարաւորութիւն տալով», ըսաւ Գործադիրի ղեկավարը:

Այս նախագիծը աւելի ուշ պիտի քննարկուի խորհրդարանին մէջ եւ միայն այնտեղ ընդունուելէ յետոյ ուժի մէջ պիտի մտնէ:

## Արայիկ Յարութիւնեան Դիմած Է՝ Դադրեցնելու Սահմանադրութեան Փոփոխութիւնը

Արցախի Հանրապետութեան նախագահ Արայիկ Յարութիւնեան, հիմք ընդունելով «Ազգային Ժողովի կանոնակարգ» օրէնքի 62-րդ յօդուածի 3-րդ մասի 4-րդ կէտը եւ 78-րդ յօդուածի 6-րդ մասը, դիմած է Ազգային Ժողովի նախագահին՝ Արցախի Հանրապետութեան Սահմանադրութեան փոփոխութեան նախագիծը վերադարձնելու նպատակով՝ զայն հանելով շրջանառութենէն:


Արցախի Հանրապետութեան նախագահ Արայիկ Յարութիւնեան

Նման որոշման համար պատճառ հանդիսացած են Արցախի Հանրապետութեան սահմանադրական փոփոխութեան նախաձեռնութեան իրացման ընթացքին հնչած տարաբնոյթ քաղաքական գնահատականները, ինչպէս նաեւ նախագիծին վերաբերեալ հանրութեան շրջանին մէջ յառաջացած բացասական արձագանգները, ինչ որ կրնար ներքին պառակտման ու լարուածութեան հերթական պատճառ դառնալ:

Ըստ երկրի ղեկավարին՝ ներքին համերաշխութիւնն ու միասնականութիւնը մեր ամենազօրեղ ուժն է եւ ամենակարեւոր երաշխիքը մեր պետականաշինութեան այս դժուարագոյն փուլին առկայ մարտահրաւէրներն արժանապատուօրէն դիմագրաւելու գործին մէջ:

Հանրապետութեան Նախագահը պիտի նախաձեռնէ լրացուցիչ քաղաքական խորհրդակցութիւններ սահմանադրական փոփոխութիւններու հետագայ ընթացքին շուրջ:

## «Վերածնուող Հայաստան»-ը Կը Դադրեցնէ Գործունէութիւնը Ազգային Ժողովէն Ներս

«Վերածնուող Հայաստան» կուսակցութեան խորհուրդի 2022 թուականի Նոյեմբեր 28-ին կայացուցած որոշմամբ՝ կուսակցութիւնը կը դադրեցնէ գործունէութիւնը ՀՀ Ազգային Ժողովին մէջ:


«Վերածնուող Հայաստան» կուսակցութեան նախագահ Վահէ Յակոբեան

«Կուսակցութեան անդամ չորս պատգամաւորներէն երեքը՝ կուսակցութեան նախագահ Վահէ Յակոբեանը, փոխնախագահներ Հռիփսիմէ Սթամպուլեանն ու Ելենա Կիրակոսեանը, օրէնքով սահմանուած կարգով դիմում են ներկայացրել՝ իրենց մանդատներից հրաժարուելու վերաբերեալ:

«Վերածնուող Հայաստան» կուսակցութեան անդամ Զեմֆիրա Միրզոեւան, ով ՀՀ 8-րդ գումարման Ազգային Ժողովում ներկայացնում է Հայաստանի ասորական համայնքն ու խորհրդարան է անցել ՀՀ ԱԺ արտահերթ ընտրութիւնների «Հայաստան» դաշինքի համապետական ցուցակի երկրորդ մասով ազգային փոքրամասնութիւնների համար նախատեսուած քուօթայով, կը շարունակի պատգամաւորական գործունէութիւնը՝ սեփական դիմումի համաձայն ժամանակաւորապէս սառեցնելով կուսակցութեանն իր անդամութիւնը: Կուսակցութեան Խորհրդի նման որոշումն արդիւնք է առաջին հերթին ՀՀ ազգային փոքրամասնութիւնների նկատմամբ յարգանքի եւ նպատակ ունի որեւէ կերպ չխոչընդոտել ազգային փոքրամասնութիւնների խնդիրների բարձրաձայնման ու լուծման ուղղութեամբ հետեւողականութիւնը, որը Զեմֆիրա Միրզոեւայի գործունէութեան կարեւոր մաս է», ըսուած է կուսակցութեան յայտարարութեան մէջ:

## Պօղոս Պօղոսեանի Սպանութեան Գործով Երկու Դատաբժիշկներուն Մեղադրանք Առաջադրուած Է

«Առագաստ» սրճարանի զուգարանին մէջ 2001-ի Սեպտեմբեր 25-ին սպաննուած Պօղոս Պօղոսեանի գործով պայմանագրային հիմունքներով աշխատող դատաբժիշկներ Շ.Գ.-ին եւ Գ.Հ.-ին մեղադրանք առաջադրուած է, որպէս խափանման միջոց ընտրուած է պաշտօնավարման կասեցումը, ինչպէս նաեւ երկրէն բացակայելու արգելք սահմանուած է, կը հաղորդէ Գլխաւոր Դատախազութիւնը:

Աւելի վաղ Դատախազութիւնը տեղեկացուցած էր, որ Պօղոսեանը կեանքէն զրկելու դէպքի առթիւ յարուցուած քրէական գործով փորձագէտներ Շ.Գ-ի եւ Գ.Հ.-ի կողմէ ակնյայտ կեղծ եզրակացութիւն տալու փաստով քրէական վարոյթ նախաձեռնուած է: Իրաւապահները հաստատած էին, որ Պօղոսեանի դին զննած փորձագէտները կեղծած են եզրակացութիւնները:

Ըստ իրաւապահներուն, եթէ 2001-ին փորձագէտները եզրայանգած էին, որ Պօղոսեանի մահը վրայ հասած է իյնալու հետեւանքով, ապա երկու տարի առաջ, երբ մահուան գործը վերաբացուեցաւ, փորձաքննութիւնը տրամագծօրէն հակառակ պատկեր արձանագրած է՝ ջախջախուած գլուխի փոխարէն ցի տղամարդը մահացած է ծեծի հետեւանքով:

43-ամեայ Պօղոսեանի մահուան գործը վերաբացուած է 2019-ին, դէպքին ականատես՝ Բրիտանիոյ քաղաքացի Սթիվըն Նիւթընի բողոքէն յետոյ: Գործով միակ մեղադրեալը նախկին նախագահի թիկնազօրի անդամներէն «Կուկու» ծածկանունով Աղամալ Յարութիւնեանն է՝ անզգոյշ սպանութեան յօդուածով:

## Հայաստանի Մէջ 2022-ին Արձանագրուած Աշխատատեղիներու Մրցանիշ Սահմանուած Է

Հայաստանի մէջ 2022 թուականին արձանագրուած աշխատատեղիներու բացարձակ մրցանիշ սահմանուած է:

Այս մասին կառավարութեան նիստին ըսաւ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան: Հոկտեմբերին արձանագրուած է 696 հազար 445 աշխատատեղի: Նախորդ տարուան Հոկտեմբերի նկատմամբ այս տարի 42 հազար 623-ով աւելի աշխատատեղի կայ:

«2018 թուականի Հոկտեմբերի համեմատութեամբ 110 հազար 266 նոր աշխատատեղ է ձեւաւորուել», ըսաւ ան:

## ԼՈՒՐԵՐ

# Տեղի Ունեցաւ Շատ Բաց, Անկեղծ եւ Դրական Քննարկում. Փաշինեանը ՀԱՊԿ Նիստին Մասին



ՀԱՊԿ գագաթաժողովի նիստը Երեւանի մէջ

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան ցաւով կը նշէ, որ Երեւանի մէջ Նոյեմբեր 23-ին կայացած ՀԱՊԿ Հաւաքական Անվտանգութեան Խորհուրդի հերթական նիստին չեն յաջողած ընդհանուր յայտարարի գալ երկու շատ կարեւոր փաստաթուղթերու վերաբերեալ: Սակայն, չնայած այդ հանգամանքին, Փաշինեան դրական կը գնահատէ ՀԱՊԿ նիստի ընթացքին տեղի ունեցած քննարկումը:

Վարչապետ Փաշինեան կառավարութեան նիստին նշեց, որ տեղի ունեցած է շատ բաց, անկեղծ եւ դրական քննարկում:

«Այդ երկու փաստաթղթերն ուղարկուել են լրամշակման եւ ես յոյս ունեմ, որ մենք կը կարողանանք գալ ընդհանուր յայտարարի: Բայց ընդհանուր առմամբ, չնայած այն հանգամանքին, որ մենք չստորագրեցինք ՀԱՊԿ-ի հռչակագիրը եւ Սեպտեմբերի 13-ի մագլցողութեան վերաբերեալ ՀԱՊԿ արձագանգի որոշումը եւ դրանք չընդունուեցին, ես ընդհանուր առմամբ դրական եմ համարում քննարկումը, դրական եմ համարում նաեւ Ռուսաստանի Դաշնութեան հետ երկկողմ ձեւաչափում ունեցած բանակցութիւնները», ըսաւ Փաշինեան՝ յոյս յայտնելով, որ այն պայմանաւորուածութիւնները, որոնք արձանագրուած են, հնարաւորինս արագ կ'իրականացուին:

Երեւանի մէջ Նոյեմբեր 23-ին կայացաւ ՀԱՊԿ գագաթաժողովը, որուն նախագահած է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանը: Հայաստանը գագաթաժողովի ընթացքին մերժած է ստորագրել ՀԱՊԿ-ի հռչակագիրը եւ Ատրպէյճանի յարձակման հետ կապուած Հայաստանին օգնութիւն տրամադրելու վերաբերեալ որոշման նախագիծը: Հայաստանը իր որոշումը հիմնաւորած է այդ փաստաթուղթերու ոչ-լիարժէք ըլլալով:

# ՀԱՊԿ-ը Հայաստանին Օգնութեան Միջոցառումներ Առաջարկած Է. Սթանիսլաւ Զաս

ՀԱՊԿ-ը առաջարկած է Հայաստանին օգնութեան միջոցառումնու ամբողջ համալիր մը, այդ շարքին՝ առաքելութեան ուղարկում Ատրպէյճանի հետ սահման՝ իրավիճակը գնահատելու համար: Այս մասին յայտնած է կազմակերպութեան գլխաւոր քարտուղար Սթանիսլաւ Զասը:



ՀԱՊԿ գլխաւոր քարտուղար Սթանիսլաւ Զաս

«Իրավիճակը հեշտ չէ, առաջին հերթին Հայաստանի եւ Ատրպէյճանի սահմանին: Այնտեղ գրեթէ ամէն օր փոխհրաձգութիւններ կ'ըլլան: Ընդհանուր առմամբ, միջոցառումներու այն համալիրը, որ ՀԱՊԿ-ը կ'առաջարկէ որպէս օգնութիւն Հայաստանին, իսկ միջոցառումները տարբեր են՝ ե՛ւ քաղաքական-դիւանագիտական, ե՛ւ ռազմական, այդ շարքին՝ առաքելութեան ուղարկում սահման, ուր այն իրատեսօրէն պիտի գնահատէ իրավիճակը, ընդհանուր առմամբ աջակցութիւն ստացած է բոլոր պետութիւններէն», ըսած է Զաս պելառուսական «???» հեռուստաալիքին տուած հարցազրոյցին մէջ:

Անոր խօսքով՝ «միակ բանը, որուն չեն յաջողած հասնիլ (ՀԱՊԿ երկիրներու ղեկավարները - Խմբ.), այնտեղ ստեղծուած իրավիճակի համախմբուած գնահատումն է»:

Զաս նշած է, որ ՀԱՊԿ-ի երեւանեան գագաթաժողովին յատուկ ուշադրութիւն դարձուած է իրավիճակին, որ կը ձեւաւորուի ինչպէս համաշխարհային հարթութեան մէջ, այնպէս ալ ՀԱՊԿ-ի պատասխանատուութեան գօտիին մէջ հաւաքական անվտանգութեան բոլոր երեք տարածաշրջաններուն՝ Արեւելեան Եւրոպայի, Կովկասում եւ Կեդրոնական Ասիոյ մէջ:

Անցեալ շաբաթ Երեւանի մէջ տեղի ունեցած ՀԱՊԿ Հաւաքական Անվտանգութեան Խորհուրդի հերթական նիստին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան մերժած էր ստորագրել ՀԱՊԿ Հաւաքական Անվտանգութեան Խորհուրդի հռչակագրին եւ Հայաստանի Հանրապետութեան օժանդակութիւն ցուցաբերելու համատեղ միջոցառումներու մասին փաստաթուղթերը:

Զաս յայտարարած էր, որ Հայաստանին օգնութիւն տրամադրելու մասին որոշման նախագիծը «բարձր պատրաստուածութիւն» ունի: Անոր խօսքով, ընդհանուր առմամբ, համաձայնեցուած է Հայաստանին օգնութիւն ցուցաբերելու միջոցառումներու համալիրը Հայաստանի եւ Ատրպէյճանի սահմանին լարուածութեան հետ կապուած իրավիճակին մէջ, փաստաթուղթը ընդհանուր առմամբ կը համարուի պատրաստ, սակայն շարք մը կէտերու հետ կապուած լրամշակումներու կարիք կայ:

# Արցախի Մէջ 9 Նախարար Ազատուած Է Պաշտօնէն

Արցախի Նախագահ Արայիկ Յարութիւնեանի հրամանագրերով 9 նախարարներ ազատուած են պաշտօններէն:




Միքայէլ Հայրիյեանը ազատուած է առողջապահութեան նախարարի պաշտօնէն: Նախարարի պարտականութիւնները ժամանակաւոր վերապահուած են նախարարի տեղակալ Արթուր Օհանճանեանին:

Նորայր Մուսայէլեանը ազատուած է գիւղատնտեսութեան նախարարի պաշտօնէն: Գիւղատնտեսութեան նախարարի պարտականութիւնները պիտի կատարէ առաջին տեղակալ Տիգրան Առստամեանին:

Անահիտ Յակոբեանը ազատուած է կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ մարմնակրթութեան նախարարի պաշտօնէն: Նախարարի պարտականութիւնները ժամանակաւոր վերապահուած են նախարարի տեղակալ Յասմիկ Մինասեանին:

Արմինէ Պետրոսեանը ազատուած է ընկերային զարգացման եւ գաղթի նախարարի պաշտօնէն: Նախարարի պարտականութիւնները ժամանակաւոր պիտի կատարէ առաջին տեղակալ Վահրամ Առաքելեանին:

Հայկ Խանումեանը ազատուած է տարածքային կառավարման եւ ենթակառուցուածքներու նախարարի պաշտօնէն: Նախարարի պարտականութիւնները ժամանակաւոր պիտի կատարէ նախարարի առաջին տեղակալ Վարդան Բեկլարեանին:

Ժիրայր Միրզոյեանը ազատուած է արդարադատութեան նախարարի պաշտօնէն եւ նշանակուած է արդարադատութեան նախարարի ժամանակաւոր պաշտօնակատար:

Դաւիթ Բաբայեանը ազատուած է արտաքին գործերու նախարարի պաշտօնէն եւ նշանակուած է արտաքին գործերու նախարարի ժամանակաւոր պաշտօնակատար:

Արամ Սարգսեանը ազատուած է քաղաքաշինութեան նախարարի պաշտօնէն եւ նշանակուած է քաղաքաշինութեան նախարարի ժամանակաւոր պաշտօնակատար:

Վահրամ Պաղտասարեանը ազատուած է ելեւմուտքի եւ տնտեսութեան նախարարի պաշտօնէն եւ նշանակուած է ելեւմուտքի եւ տնտեսութեան նախարարի ժամանակաւոր պաշտօնակատար:

Արցախի կառավարութեան մէջ 11 նախարարութիւն կայ՝ բացի վերոյիշեալներէն նաեւ Պաշտպանութեան եւ Ներքին Գործերու Նախարարութիւնները:

# Հնդկաստանի Նախկին Դեսպանը Հայաստանի Հետ Զէնքի Համատեղ Արտադրութեան Հնարաւորութիւն Կը Տեսնէ

Հայաստանի մէջ Հնդկաստանի նախկին դեսպան Ռինա Փանթէյ անդրադարձած է շրջանառուող լուրերուն, որ Հայաստանը Հնդկաստանէն զէնք եւ զինամթերք գնած է: Անդրադառնալով Հայաստանին զէնքի վաճառքի վերաբերեալ մամուլին մէջ տեղ գտած լուրերուն վերաբերեալ հարցին, Փանթէյ պատասխանեց.



Հայաստանի մէջ Հնդկաստանի նախկին դեսպան Ռինա Փանթէյ

«Բոլոր երկիրները պաշտպանական համաձայնագրեր ունեն: Եւ շատ լաւ է, որ մէկն ունինք այստեղ (Հայաստանի մէջ-Խմբ.): Եւ մենք կրնանք համագործակցիլ համատեղ (զէնքի-Խմբ.) արտադրութեան շուրջ նոյնպէս: Պաշտպանութեան ոլորտին մէջ դուք որոշակի փորձ ունիք, մենք եւս որոշակի ունինք, այսպիսով՝ մենք կրնանք կիսուիլ այդ փորձառութեամբ», ըսաւ Փանթէյ:

Ռազմական համագործակցութեան վերաբերեալ հարցին ի պատասխան՝ Հայաստանի մէջ Հնդկաստանի նախկին դեսպանը նշեց, որ լաւ պիտի ըլլայ նաեւ, որ հայ եւ հնդիկ զինուորականները համատեղ վարժանքներ անցընեն:

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

# Մինչեւ 2028 Կը Նախատեսուի Տիեզերք Արձակել Հայկական Եւս Երկու Արբանեակ



Նիկոլ Փաշինեան կը գլխաւորէ Բարձր Արհեստագիտական Արդիւնաբերութեան Նախարարութեան մէջ կայացած հանդիպումը

*Վարչապետ Նիկոլ Փաշինեանի գլխաւորութեամբ Բարձր Արհեստագիտական Արդիւնաբերութեան Նախարարութեան մէջ տեղի ունեցած է գերատեսչութեան 2022 թուականի գործունէութեան հաշուետուութեան քննարկում:*

*Քննարկման սկիզբը Նիկոլ Փաշինեանը նշած է. «Նախարարութիւնների եւ գերատեսչութիւնների 2022 թուականի գործունէութեան արդիւնքներն ամփոփելու շրջանակում այսօր մենք Բարձր Արհեստագիտական Արդիւնաբերութեան Նախարարութիւնում ենք: Ճիշդ է, օրացուցային տարին դեռ չի աւարտուել, բայց, ըստ էութեան, մենք այսօր կարող ենք ամփոփել արդիւնքները, որովհետեւ այն, ինչը պէտք է յառաջիկայ ամսուայ ընթացքում տեղի ունենայ, արդէն պէտք է ծրագրաւորուած եւ ընթացքի մէջ լինի»:*

*Բարձր Արհեստագիտական Արդիւնաբերութեան Նախարարութեան նախարար Ռոպերթ Խաչատրեանը նախ ամփոփ ներկայացուցած է նախարարութեան ընթացիկ ու յառաջիկայ ծրագիրները, ապա խօսքը փոխանցած է տարբեր ոլորտները համակարգող փոխնախարարներուն:*

*Նշուած է, որ յաջողութեամբ ընթացքի մէջ է աշխատաշուկայէն նոր աշխատակիցներ ներգրաւող ընկերութիւններուն աշխատավարձերու եկամտահարկի 50 տոկոսի վերադարձի ծրագիրը, որուն շրջանակին մէջ պետութեան կողմէ արդէն իսկ տրամադրուած է 2,8 միլիառ դրամ: Զեկուցուած է, որ տեղեկատուական արհեստագիտութեան շարք մը ընկերութիւններ բարձրագոյն ուսումնական հաստատութիւնմասնաւոր հատուած ծրագրի միջոցով ընթացիկ տարուան մէջ ներգրաւուած են միջին եւ բարձր որակաւորում ունեցող աւելի քան 700 աշխատակիցներ:*

*Վարչապետին զեկուցուած են տիեզերական ոլորտի զարգացման ուղղուած քայլերը: Ընդգծելով այս տարուան ընթացքին հայկական ռազմավարական առաջին արբանեակի տիեզերք արձակման փաստը՝ պատասխանատուները նշած են, որ մինչեւ 2028 թուականը Հայաստան կը նախատեսէ տիեզերք արձակել հայկական եւս երկու արբանեակ: Կը նախատեսուի 2023 թուականին Հայաստանի մէջ ստեղծել արբանեակի կառավարման կեդրոն եւ ընդունիչ կայան, որուն գլխաւոր գործառոյթներէն են արբանեակի կառավարումը, տիեզերալուսանկարներու ստացումը: Այդ նպատակով ընթացքի մէջ է մասնագէտների վերապատրաստման գործընթացը:*

*Ամփոփելով՝ վարչապետն ընդգծած է Հայաստանի մէջ բարձր արհեստագիտական ոլորտի, կապի, հեռահաղորդակցութեան ենթակառուցուածքներու հետեւողական ու շարունակական զարգացման ուղղութեամբ կառավարութեան նպատակադրումը եւ նշած է ծրագիրներու արդիւնաւէտ իրականացման անհրաժեշտութիւնը: Նիկոլ Փաշինեան յանձնարարած է պատասխանատուներուն՝ յառաջիկային ներկայացնել այս խորհրդակցութեան ընթացքին բարձրացուած խնդիրներու եւ հարցերու լուծման «ճանապարհային քարտէզ»՝ վերը նշուած ուղղութիւններով յառաջ շարժելու եւ զարգացում ապահովելու նպատակով:*

# Լեմքինի Հիմնարկը Կը Սատարէ Արցախի Ինքնորոշման Իրաւունքին՝ Ցեղասպանութենէն Խուսափելու Համար




*Ցեղասպանութեան կանխարգելման Լեմքինի Հիմնարկը կանգնած է Արցախի Հանրապետութեան ժողովուրդի կողքին, որ Հոկտեմբերի 30-ին Ստեփանակերտի մէջ յայտնած է ինքնորոշման իր կամքը: Այս մասին Ցեղասպանութեան կանխարգելման Լեմքինի Հիմնարկը կը յայտարարութիւն տարածած է՝ «Ցեղասպանութեան միջոցով «խաղաղութիւն» կամ «բարեկեցութիւն» գոյութիւն չունի» խորագրով:*

*«Լեմքինի Հիմնարկը իր համերաշխութիւնը կը յայտնէ Արցախի Հանրապետութեան ժողովուրդին, որ բարձրաձայնած է ինքնորոշման իր կամքին մասին: Ատրպէյճանը յաւակնութիւններ ունի Արցախի նկատմամբ՝ չնայած այդ տարածքին մէջ հազարամեակներ շարունակ բնակչութեան մեծամասնութիւնը հայեր եղած են», գրուած է յայտարարութեան կից թուիթըրեան գրառման մէջ:*

*Հիմնարկը կը յիշեցնէ, որ ինքնորոշման իրաւունքը միջազգային իրաւական համակարգի հիմնարար իրաւունքներէն մէկն է, եւ Արցախի ժողովուրդը արժանի է այն բանին, որ միջազգային հանրութիւնը լրջօրէն վերաբերի ինքնորոշման անոնց պահանջներուն:*

*Յայտարարութեան մէջ նաեւ հակիրճ կը ներկայացուի Արցախի կարգավիճակի փոփոխութեան պատմութիւնը, Արցախեան երկու պատերազմները եւ անոնց հետեւանքով ստեղծուած իրավիճակը:*

*Ցեղասպանութեան կանխարգիլման Լեմքինի Հիմնարկը նաեւ կը շեշտէ, որ միջազգային հանրութիւնը պէտք չէ անտեսէ տարածաշրջանին մէջ Հայոց Ցեղասպանութեան հետեւանքները, որ «Արեւմտեան Հայաստանի մէջ լիովին ոչնչացուց հայկական ներկայութիւնը», ինչպէս նաեւ «հայերու նկատմամբ ատրպէյճանցի ազգայնականներու անզուսպ ցեղասպանական թշնամանքը»:*

*«Արեւմտեան աշխարհը եւ յատկապէս ՆԱԹՕ-ն չեն հասկնար, Արցախը «գիջիլը» պիտի նշանակէ հայերու դէմ ցեղասպանութեան թողտուութիւն՝ հայերու բռնի տեղահանում եւ հալածանքներ, համատարած ոճրագործութիւններ, մշակութային ժառանգութեան ոչնչացում եւ վերջին տասնամեակներու ընթացքին կովկասեան տարածաշրջանին մէջ ամենամեծ մարդասիրական ճգնաժամերէն մէկը, այդ շարքին՝ փախստականներու մեծ հոսք դէպի Հայաստանի Հանրապետութիւն: Եւ որ կարեւոր է, հաշուի առնելով Թուրքիոյ եւ Ատրպէյճանի մէջ ցեղասպանութեան ներկայիս կարմիր դրօշները, ինչպէս նաեւ այն, ինչ մենք գիտենք ցեղասպանութեան գործընթացի մասին ընդհանրապէս, աներեւակայելի է, որ Արցախի «գիջումը» վերջ պիտի դնէ հակամարտութիւններուն տարածաշրջանին մէջ, առաւել եւս՝ պիտի յանգեցնէ «խաղաղութեան» եւ «բարեկեցութեան»», գրուած է յայտարարութեան մէջ:*

# Ամուլսարի Դէմ Պայքարողներուն Վարկը

Շարունակուած էջ 1-էն

գամաւոր Վահէ Յակոբեան իր կնոջ ղեկավարած «Հանրային դիւանագիտութիւն» բարեգործական կազմակերպութեան կը կատարէր նուիրատուութիւններ, որ, իր հերթին, կը ֆինանսաւորէր այդ ակտիւիստները: Այսպիսով, պարզ կը դառնայ, որ Ամուլսարի հանքին դէմ բարձրացած աղմուկը սարքուած էր մրցակից հանքավայրի մը կողմէ:

Օրին, «Մասիս» եւս հաւատք ընծայելով նոյն այդ «բնապահպաններուն» մեզի տրամադրած տեղեկութիւններուն, այս սիւնակով անդրադարձաւ Ամուլսարի հանքի հաւանական վտանգներուն ու արտայայտուեցաւ անոր շահագործման դէմ:

Ակտիւիստներէն ոմանք չժխտելով գումարներ ստանալու փաստ, լրագրողական կայքին յայտնած են որ, իրենք տեղեակ չեն եղած ստացած դրամներու իսկական աղբիւրի մասին: Ինչ որ ալ ըլլայ, անոնց արարքը մեծ հարուած կը հասցնէ Հայաստանի բնապահպանութեան շարժումին ընդհանրապէս, որ կարեւոր դեր ունի կատարելիք՝ հանրութեան ու կառավարութեան ուշադրութեան կեդրոնին պահելու համար այդ կարեւոր հարցը:

Այս բացայայտումէն ետք, ինչպէ՞ս պիտի շարժին Հայաստանի կառավարութիւնն ու հանքը շահագործող ընկերութիւնը առայժմ կը մնայ անորոշ:

**Գ. ԽՈՏԱՆԵԱՆ**
**«ՄԱՍԻՍ»**

# «Հայաստան» Համահայկական Հիմնադրամ

Շարունակուած էջ 1-էն

*մինը՝ 700.000 տոլար, Գանատայի (Թորոնթօ) Տեղական Մարմինը 547.272 տոլար, ինչպէս նաեւ նուիրատուութիւններ կատարուած են հետեւեալ երկիրներէն՝ Գանատայի (Մոնրէալ) 204.000 տոլար, Պրազիլ 100.000 տոլար, Զուիցերիա 80.000 տոլար, Գերմանիա 52.660 տոլար, Արժանթին 25.000 տոլար, Աւստրիա 6.144 տոլար, Ռումանիա 3.833 տոլար:*

*«Մենք կը ստեղծենք կենսունակ համայնքներ» խորագրով հեռուստամարաթոնի միջոցները պիտի նպատակաուղղուին հայրենիքի սահմանային համայնքներու առողջապահական, ընկերային, կրթական, մշակութային, ենթակառուցուածքներու վերականգնման, ինչպէս նաեւ սահմանային համայնքներու զարգացման ուղղուած ծրագիրներու ֆինանսաւորման:*

*«Շնորհակալ ենք մեր բոլոր գործընկերներուն եւ նուիրատուներուն շարունակական աջակցութեան, անմնացորդ նուիրումի եւ Հայրենիքի կողքին կանգնելու համար, որուն շնորհիւ բարելաւուած է մեր տասնեակ հազարաւոր հայրենակիցներուն կեանքը», կը նշեն Հիմնադրամէն:*

www.massisweekly.com

## «Արարատ» Օրաթերթի 85-Ամեակին Առթիւ ՀԱՒԱՏՔԸ…

… Եւ այսպէս, արդէն 85-ամեայ «Արարատ»ը, ինքնաբերաբար անցաւ հայ մամուլի նահապետներու շարքին:

Սփիւռքահայ կեանքի լպրծուն գետինն ու բազմազան խոչընդոտներու մշտական առկայութիւնը պատճառ չկրցան հանդիսանալ անոր վաղաժամ ընկրկումին կամ յուսահատական խարխափումներու: Անհաւասար պայքարի յորձանուտին մէջ նետուած հայ մամուլին հսկայական ճիգերն ու յարատեւ ջանքերը, վստահաբար պիտի արժեւորուին ու գնահատուին ապագային: Երեւոյթը կը զգենու առաւել ծանրակշիռ բնոյթ՝ երբ խօսքը կը վերաբերի օրաթերթին. ամէ՛նօրեայ հեւքին ու տագնապին:

Լիբանան խարսխած հայ տարագիրներու բեկորներ, շուտով, իրենց վերապրումի եւ ազգային յարութեան կռուանները սեպեցին այն կառոյցները, որոնց շնորհիւ պիտի տրոփէր հայ կեանքը՝ իր տարբեր դրսեւորումներով: Դառնաղի անցեալը պահ մը ետին ձգած եւ գաղթականութեան ցուպը անգոսնած հայորդիներ, կամքի ու կորովի եզական սխրանքով ու խոյանքով, կենսակոչեցին նոր կեանք մը՝ առաւե՛լ եռուն, կենսալի՛ց եւ նպատակասլաց: Այլընտրանք չկար՝ եթէ ոչ հաստատել ազգապահպանման պինդ գրաւականներ: Անոնցմէ էր՝ մամուլը:

Հոյլ մը հաւատաւորներ, ուսընդուս, գաղափարական բարձր գիտակցութեամբ եւ քաղաքացիական յանձնառութեամբ միաւորուեցան օրաթերթի մը շուրջ՝ զայն մկրտելով «Արարատ» անունով՝ բնականաբար ընթերցողներու եւ համակիրներու, շարքայիններու եւ գաղութահայ ուժերու աչքերը սեւեռուն պահելու համար դէպի հայրենիք, դէպի հայոց խորհրդանիշ: Նորածին թերթին անունն ու առաքելութիւնը պատահականութիւններ չէին. հոն կար ազգային-հայրենասիրական երթի մը հանդիսաւոր խոստումը:

Երկա՛ր ճանապարհ անցած է արդէն «Արարատ»ը, որուն փորեղ հաւաքածոներու էջերէն կ'արտացոլան ազգային, լիբանանեան, միջազգային կեանքին տարիներու գիկզակները, մշակութային-միութենական-ընկերային ու մարզական իրադարձութեանց անցելայուշ դրուագները: Անոր խունացած էջերը վկաներն են մերօրեայ գունագեղ կեանքին, տագնապներուն, յոյզերուն եւ յոյսերուն, նուաճումներուն եւ ցաւերուն: Թաւալած տարիներու ընթացքին անոր կուտակուած էջերը կը պատմեն այն փոթորիկներու մասին, որոնք պատահեցան քիչ մը ամէն տեղ:

Ո՞վքեր հիմնեցին «Արարատ»ը, ինչպիսի՞ մարդիկ էին անոնք եւ ի՞նչպէս գոյատեւեց աջէն ու ահեակէն փչող մրրիկներու դիմաց, ի՞նչ ուժով կրցաւ յաղթահարել մարտահրաւէրներն ու սպառնալից որոտումները, ի՞նչպէս կը մարտնչի ան զանազան գուպարներու ընթացքին եւ վերջապէս ո՞րն է գաղտնիքը անոր յարատեւման եւ 85-ամեայ պատկառազդու տարիքին: Պէտք է ջոկել մէկ բառ՝ ՀԱՒԱՏՔ-ը: Հաւատք՝ իր ստանձնած ազգային-գաղափարական դաւանանքին, իր մշակած ազգանուէր եւ հայրենանուէր սկզբունքներուն եւ այն ուղեգիծին, որ գծած էին օրկանին հիմնադիր այրերը: Հաւատքն է որ զօրացուց անոր շուրջ խմբուած «խենթեր»ը, զանոնք կոփեց եւ կռանեց անտեղիտալի վճռակամութեամբ: Քաղաքական, հոգեբանական եւ տնտեսական ճնշումներ փորձեցին խեղդել հաւատքը, լռեցնել զայն ի սպառ, սակայն անխախտելի հաւատքը ահեղ մաքառումներէն դուրս եկաւ աւելի ջրդեղուած ու ամրացած:

Այս անկիւնադարձային փուլին՝ ողջո՜յն 85-ամեայ վեհաշուք նահապետ: Գալիք օրերդ ըլլան լուսաւոր եւ արշալոյսներդ՝ արեւոտ:

ԱՒԵՏԻՍ ՌԱԶՄԻԿ
«ԱՐԱՐԱՏ»Լիբանան

## Հայ-Թրքական Յարաբերութիւններուն Կարգաւորումը Դրական Կ'ընթանայ. Քալըն

Հայ-թրքական յարաբերութիւններուն կարգաւորումը դրական կ'ընթանայ: Այս մասին, Նոյեմբեր 29ին, տեղական հեռուստաընկերութեան հետ հարցազրոյցին յայտարարած է Թուրքիոյ նախագահի մամուլի խօսնակ Իպրահիմ Քալընը:

Թուրքիոյ նախագահին խօսնակը բարձր գնահատած է Հոկտեմբեր 6-ին Փրակի մէջ կայացած Էրտողան-Փաշինեան հանդիպումը:

«Անգարայի եւ Երեւանի միջեւ յարաբերութիւնները այժմ կը հաստատուին ուղղակիօրէն՝ առանց միջնորդներու: Այդ շատ կարեւոր է», նշած է Քալըն:

## Պաքուն Պատասխանած Է

Շարունակուած էջ 1-էն

րաբերեալ: Մենք շարունակում ենք հաւատարիմ մնալ այս պայմանաւորուածութեանը եւ կրկին պատրաստակամութիւն ենք յայտնում ընդունելի ժամկէտներում կազմակերպել Հայաստանի վարչապետի, Ատրպէյճանի նախագահի, Ֆրանսայի նախագահի եւ Եւրոպական Խորհրդի նախագահի հանդիպումը: Կարծում ենք, որ Փրակայում այս ձեւաչափով տեղի ունեցած հանդիպումը բաւականին արդիւնաւէտ էր եւ կարեւոր Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ յարաբերութիւնների կարգաւորման գործընթացի ծիրին մէջ: Հայկական կողմը, ինչպէս եւ նախկինում, շահագրգիռ է յարաբերութիւնների կարգաւորմամբ», ըսած է Արարատ Միրզոյեան:

Իլհամ Ալիեւ անցեալ Ուրբաթ յայտարարած էր, թէ հանդիպումը կը չեղարկուի, քանի որ վարչապետ Փաշինեանը համաձայն է հանդիպիլ միայն Ֆրանսայի նախագահ Մաքրոնի մասնակցութեամբ: Ատրպէյճանի նախագահը պնդած էր, թէ դէմ է Ֆրանսայի նախագահի միջնորդութեան՝ այդ բացատրելով՝ «Փարիզի հակաատրպէյճանական դիրքորոշմամբ»:

Արձագանգելով պատմական քարտէզներու հիման վրայ սահմանազատման գործընթաց իրականացնելու Պաքուէն հնչող յայտարարութիւններուն, Հայաստանի արտաքին գործերու նախարարը ըսած էր, որ նման յայտարարութիւնները կը խախտեն Փրակայի եւ Սոչիի մէջ ստանձնած յանձնառութիւնը՝ երկու երկիրներուն միջեւ սահմանազատման աշխատանքները իրականացնել՝ հիմք ընդունելով ՄԱԿ-ի կանոնադրութիւնը եւ Ալմաաթայի հռչակագիրը:

«Այդ յանձնառութեան շրջանակներում սահմանազատման աշխատանքները պէտք է իրականացուեն 1991 թուականի՝ ԽՍՀՄ փլուզման ամսաթուի դրութեամբ գոյութիւն ունեցած եւ իրաւական ուժ եւ նշանակութիւն ունեցած իրաւական ակտերի հիման վրայ», շեշտած է Միրզոյեան:

Հայաստանի արտաքին գործերու նախարարը նշած է, որ չնայած տարբեր ուղղութիւններով ընթացող բանակցութիւններուն՝ Ատրպէյճանի կողմէ չեն դադրիր ռազմատենչ յայտարարութիւնները, հայկական կողմին ուղղուած անհիմն մեղադրանքները եւ ուժի գործադրման սպառնալիքները: Բացի այդ, ատրպէյճանական զինուած ուժերը կը շարունակեն գտնուիլ Հայաստանի ինքնիշխան տարածքին մէջ, պարբերաբար Ատրպէյճանի կողմէ տեղի կ'ունենան ռազմական սադրիչ գործողութիւններ:

«Այս փաստերի համադրումը ցոյց է տալիս, որ իրավիճակը շարունակում է չափազանց լարուած մնալ, եւ մեր միջազգային բոլոր գործընկերները պիտի յաւելեալ ջանքեր գործադրեն՝ զսպելու Ատրպէյճանի նկրտումները եւ պահպանելու Հարաւային Կովկասում առկայ փխրուն խաղաղութիւնը», ըսած է Հայաստանի արտաքին գործերու նախարարը:




# ԶՊՄԿ-ն ֆինանսաւորել է Ամուլսարի Հաանքի Դէմ Պայքարող Ակտիւիստների

ՅԱԿՈԲ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

*Ամուլսարի ոսկու հանքավայրի շահագործման դէմ տարիների ընթացքում բնապահպանական շարժում է ձեւաւորուել: Հանքի բացման դէմ պայքարը վերսկսուեց 2018-2020 թուականներին:*

*Հանքավայրի շահագործման դէմ պայքարի արդիւնքներից մէկն այն էր, որ կառավարութիւնը ստիպուած եղաւ վճարել մօտ 400 հազար տոլար եւ նոր փորձաքննութիւն պատուիրել, որպեսզի իրավական հիմք ունենան հանքի շահագործումն արգելելու համար:*

*«Փաստերի Ստուգման Հարթակը» պարզեց, որ այդ բնապահպանական շարժման մասնակիցների մի մասը միջնորդաւորուած կերպով եկամուտ է ստացել երկրի խոշորագոյն հանքարդիւնաբերողից՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատից: Նրանց թւում են դերասան Սերգեյ Դանիէլեանը, բնապահպան Լեւոն Գալստեանը, լրագրող Արման Սուլեյմանեանը, բնապահպան Սիլվա Ադամեանը եւ այլք:*

*Այս յօդուածում ներկայացնում ենք մեր յայտնաբերած փաստերը ԶՊՄԿ-ից ֆինանսաւորման մասին, ինչպէս նաեւ՝ յիշեալ անձանցից ոմանց մեկնաբանութիւնները հարցի վերաբերեալ:*

*ԶՊՄԿ-ն ֆինանսաւորում էր հանքի համասեփականատէր, Սիւնիքի երբեմնի մարզպետ, ներկայիս «Հայաստան» խմբակցութեան ԱԺ պատգամաւոր Վահէ Յակոբեանի կնոջ՝ Էլիզապէթ Պետրոսեանի ղեկավարած «Հանրային դիւանագիտութիւն» բարեգործական կազմակերպութեանը, որն էլ, իր հերթին, ֆինանսաւորում էր ներքոյ յիշեալ մարդկանց:*

*Բարեգործական կազմակերպութիւնը ստեղծուել է 2014 թուականին: Կազմակերպութեան նախագահն է եղել լրագրող Լիկա (Լիլիթ) Թումանեանը: 2016 թուականից կազմակերպութեան նախագահ է դարձել Էլիզապէթ Պետրոսեանը:*

*Նոյն թուականին «Հանրային դիւանագիտութիւն» բարեգործական կազմակերպութիւնը հիմնադրում է լրատուական գործունէութիւն ծաւալող PARA TV լրատուականը եւ սկսում ֆինանսաւորել լրատուականի գործունէութիւնը: Փաստացի, ԶՊՄԿ-ն սկսում է ֆինանսաւորել PARA TV-ին:*

*PARA TV-ն Ամուլսարի հանքավայրի դէմ բնապահպանական շարժումը ամենաակտիւ կերպով լուսաբանող լրատուականներից մէկն էր:*

*Փաստացի, Ամուլսարի շահագործման դէմ պայքարող ակտիւ քաղաքացիների զգալի մասը այս կամ այն կերպ, այդ թւում՝ ֆինանսապէս, կապուած էր PARA TV-ի հետ:*

*Դա առաւելապէս տեսանելի է դառնում, երբ ուսումնասիրում ենք նրանց ֆէյսպուքեան էջերի գրառումները այն ժամանակահատուածում, երբ բողոքի ակցիաները բաւական ակտիւ փուլում էին, ու հանրութեանը յուզող կարեւոր թեմաներից մէկը հենց Ամուլսարն էր:*

*Օրինակ, Արման Սուլեյմանեանն ու Սերգեյ Դանիէլեանն այս լրատուականում վարում էին «Դժուար զրոյց» հաղորդաշարը:*

*PARA TV-ն թողարկեց «Ամուլսար. պետութեան բնանտարբերութիւնը» ֆիլմը, որը պատրաստել էր Արման Սուլեյմանեանը: Իսկ Սերգեյ Դանիէլեանն իր ֆէյսպուքեան էջում ակտիւօրէն պայքարում էր հանքի շահագործման դէմ, ուղիղ եթերներով յաճախ գտնւում էր հանքի շահագործման դէմ պայքարող ակտիւիստների վրաններում:*

*PARA TV-ի եութուպեան ալիքում Ամուլսարի խնդրի վերաբերեալ կան մօտ 70 տեսանիւթեր, ուղիղ եթերներ, ռեպորտաժներ, ֆիլմեր եւ այլն: Սրանց մի մասը պետական պաշտօնեաների եւ ոլորտի պատասխանատուների հարցազրոյցներն են հանքի շահագործման վտանգների վերաբերեալ, իսկ միւս՝ առաւել մեծ մասը հենց Ամուլսարի հանքի շահագործման դէմ պայքարի, շահագործման բացասական ազդեցութեան մասին է:*

*Միեւնոյն ժամանակ, լրատուամիջոցի ալիքում Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի վերաբերեալ կայ միայն մի քանի տեսանիւթ, որտեղ կոմբինատի աշխատանքը ներկայացուած է բացառապէս դրական լոյսի ներքոյ: Դրանցից են, օրինակ, ԶՊՄԿ-ի պաշտօնական հաղորդագրութիւնները այս կամ այն թեմայի վերաբերեալ, սոցիալական ոլորտին կատարուած տարեկան հաշուետուութիւնները եւ այլն:*

*Այսպիսով, Ամուլսարի դէմ պայքարող ակտիւիստների եւ հասարակական գործիչների մի մասը կապուած էր PARA TV-ի հետ, աշխատավարձ էր ստանում այստեղից, լրատուամիջոցին էլ, իր հերթին, վճարում էր ԶՊՄԿ-ից ֆինանսաւորուող բարեգործական կազմակերպութիւնը:*

*«Փաստերի ստուգման հարթակի» տրամադրութեան տակ են յայտնուել PARA TV-ի՝ վերջին տարիներին հարկային մարմնին ներկայացուած հաշուետուութիւնները, որտեղ ներկայացուած են այն անձանց ցուցակները, որոնք վճարուել են լրատուականի կողմից:*

*Նրանց թւում են, մասնաւորապէս, հետեւեալ անձինք, որոնց համագործակցութեան ժամանակահատուածը եւ ստացած գումարի չափը ներկայացուած է ստորեւ.*

*01.2017-07.2020 Էլիզապէթ Պետրոսեան - ԶՊՄԿ այն ժամանակուայ տնօրէն Վահէ Յակոբեանի կինը, «Հանրային դիւանագիտութիւն» ՀԿ-ի նախագահ - ամսական 1 միլիոն 372 հազարից՝ եւ 1 միլիոն 500 հազար աշխատավարձ,*

*03.2018-07.2020 Արման Սուլեյմանեան - լրագրող - ամսական 270-700,000*

*03.2018-03.2019 Սերգեյ Դանիէլեան - դերասան, բլոգեր - ամսական 130-270,000,*

*12.2016 Լեւոն Գալստեան - բնապահպան - 402,000,*

*09.2017-05.2018 Անահիտ Բախշեան - «Հանրային դիւանագիտութիւն» ՀԿ նախագահի կրթութեան հարցերով խորհրդական - ամսական 405,000,*

*01.2017-06.2018 Սիլվա Ադամեան - էկոակտիվիստ, Ամուլսարի հանքի դէմ պայքարի առաջամարտիկ, PARA TV-ի աշխատակից - ամսական 70,000,*

*08.2018-03.2019 Հայկ Բարսեղեան- էկոակտիվիստ, SOS նախաձեռնութեան անդամ - ամսական 280-300,000,*

*«Փաստերի ստուգման հարթակը» փորձեց կապուել նշուած անձանց հետ՝ նրանցից մեկնաբանութիւն ստանալու համար:*

*Բնապահպան ակտիվիստ Լեւոն Գալստեանը մեզ հետ զրոյցում հաստատեց, որ 2016-ի Յունիսից աշխատել է «Հանրային դիւանագիտութիւն» ՀԿ-ում որպէս բնապահպանական հարցերով խորհրդատու, սակայն այդ ժամանակ չի իմացել, որ այն ֆինանսաւորւում է Քաջարանի կոմբինատի կողմից: Սակայն երբ մի քանի ամիս անց իմացել է այդ մասին, դադարեցրել է համագործակցութիւնը կազմակերպութեան հետ:*

*Հասարակական-քաղաքական գործիչ, նախկին պատգամաւոր Անահիտ Բախշեանը մեզ հետ զրոյցում յայտնեց, որ ինքը ներգրաւուած է եղել կազմակերպութեան կրթական ծրագրերում, մի քանի նախագծեր է իրականացրել Սիւնիքի մարզում եւ Ամուլսարի հանքի դէմ պայքարը որեւէ կերպ կապ չունի իր մասնագիտական գործունէութեան հետ: Ինչ վերաբերում է Քաջարանի կոմբինատի կողմից ֆինանսաւորուելուն զուգահեռ Ամուլսարի շահագործման դէմ պայքարին, ապա տիկին Բախշեանը դրանում որեւէ խնդիր չի տեսնում. «Դա իր քաղաքացիական դիրքորոշումն է»:*

*Լրագրող Արման Սուլեյմանեանն ասաց, որ որպէս անկախ լրագրող իրեն չի հետաքրքրում ստացած գումարի ծագման աղբիւրը: Վերջինս նշեց նաեւ, որ նոյն «Ամուլսար. պետութեան բնանտարբերութիւնը» ֆիլմում կադրեր կան նաեւ Արծւանիկի պոչամբարից (Արծւանիկը Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի պոչամբարն է - խմբ.), հետեւաբար՝ վերջինս որեւէ կերպ կաշկանդուած չէ ԶՊՄԿ-ի կողմից ֆինանսաւորուելու փաստով: Վերջինս յայտարարեց նաեւ, որ իր ու ԶՊՄԿ-ի միջեւ կապը որեւէ կերպ հիմնաւորուած չէ եւ դրանք հերիւրանքներ են: Աւելին՝ ֆիլմում ոչինչ խեղաթիւրուած չէ, հակառակ դէպքում «Լիդիան» ընկերութիւնը վաղուց դատարան դիմած կը լինէր:*

*Ամենակարեւոր նիւանսը, ըստ Սուլեյմանեանի, Ամուլսարի եւ Քաջարանի հանքավայրերի աշխատանքների սկզբունքային տարբերութիւնն է: Ամուլսարի դէպքում հանքաքարը ենթարկւում է ցիանիդային մշակման, իսկ Քաջարանի դէպքում դա արւում է ֆլոտացիայի միջոցով:*

*Սիլվա Ադամեանի, Հայկ Բարսեղեանի եւ Սերգեյ Դանիէլեանի հետ մեզ կապուել չյաջողուեց:*

*«Յօդուածը հրապարակուելուց յետոյ մեզ հետ կապուեց Հայկ Բարսեղեանը եւ որոշ պարզաբանումներ ներկայացրեց: Նրա խօսքով, PARA TV-ի հետ իր համագործակցութիւնը սահմանափակուել է «Սիւնեաց աշխարհ» վերնագրով մի մանկական գրքի տեղանունների համար լուսանկարներ պատրաստելու գործով:*

*«Դրա դիմաց վճարուել եմ, անկեղծ ասած՝ չեմ յիշում որքան, բայց դրա մէջ ներառուած էր պենզինի ծախսը, ուտելիքը, վրանի ձեռքբերումը եւ այլ տեխնիկական ծախսեր: Անգամ տեղեակ չեմ՝ գիրքը հրատարակուել է, թէ ոչ: Բացի դրանից, եղել են բազմաթիւ ֆինանսական առաջարկներ (PARA TV-ից-խմբ.), որոնք ես ուղղակիօրէն մերժել եմ: Անգամ առաջարկ է եղել «SOS»-ը*

Շար.ը էջ 18





«ՀԱՆՐԱՅԻՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԿ

Տպելու տարբերակ | xml տարբերակ

Առ 2014-11-24 | Առ 2015-07-31 | Առ 2016-03-24 | Առ 2017-09-11

Կարգավիճակ: Լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն։

Գրանցող մարմին: ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստր

Գրանցման համար 211.171.836409 | Գրանցման ամսաթիվ 2017-09-11 | [illegible] 49238314

Հիմնադրման ամսաթիվ 2014-11-24 | ՀՎՀՀ 02632884 | Կանոնադրական կապիտալը ՀՀ դրամով 0

Գործադիր մարմնի ղեկավարներ

| Անուն ազգանուն | Անձնագրի սերիան և համարը | Հասցե | Պաշտոնը | Գրանցման ամսաթիվ | Փոփոխության ամսաթիվ |
|---|---|---|---|---|---|
| ԷԼԻԶԱԲԵԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՇՈՏԻ | [redacted] | [redacted] | Նախագահ | 2016-03-24 | - |
| ԼԻԼԻԹ ԹՈՒՄԱՆՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ | [redacted] | [redacted] | Նախագահ | 2014-11-24 | 2016-03-24 |

© 2011-2012 VXSoft Ltd. Revision 1.2.504

e-gov

## Փասատենայի Հայ Եղբայրութեան Աստուածաշունչի եկեղեցիի 50-րդ Ամեակի Տօնակատարութիւն



Եկեղեցիի Պատւոյ հովիւ Վեր. Յովսէփ Մաթոսեան, Աւագ Հովիւ Վաչէ Էքմէքճեան եւ Օգնական Հովիւ Վաչէ Սվաճեան կը կտրեն յոբելինական կարկանդակը

*Շաբաթ, 5 Նոյեմբեր, 2022-ի երեկոյեան, Փասատենայի Հայ Եղբայրութեան Աստուածաշունչի Եկեղեցին (ՀԵԱԵ) աւելի քան 300 անդամներու եւ հիւրերու հոծ բազմութեան ներկայութեամբ, եկեղեցաշէնքի մարզասրահէն ներս տօնեց իր վերակազմաւորման 50րդ Յոբելինական տարեդարձը՝ Թէկուզ մէկ տարուայ ուշացումով բոլորիս յայտնի համավարակի պատճառներով:*

*Իր արմատները Հալէպէն եւ ապա Պէյրութէն ստացած Եղբայրութեան եկեղեցիի անդամները, որոնք վերջնական կեցութիւն հաստատած են Հիւսային եւ Հարաւային Ամերիկայի ցամաքամասներու տարբեր գաղթօճախներու մէջ, վերակազմած են իրենց եկեղեցիները եւ Աւետարանի բարի լուրը տարածելու առաքելութիւնները: Փասատենայի եկեղեցին ալ մաս կազմած է սոյն աշխատանքներու որպէս բեղուն մէկ արտայայտութիւնը եւ արդիւնքը: 1971ին, Փասատենայի ՀԵԱԵ-ի վերակազմաւորած է իր կառոյցը եւ ժամանակի վրայ դարձած է հոգեւոր փարոս մը Աստուածաշնչեան եւ Սուրբ Երրորդութեան հաւատքի նոյն սկզբունքները կիսող անհատներու եւ ընտանիքներու, որոնք կու գային այլ երկիրներէ, ինչպէս՝ Հարաւային Ամերիկայէն, Եգիպտոսէն, Եւրոպայէն, Պարսկաստանէն, Իրաքէն ու մայր Հայրենիքէն:*

*Իր անուանակոչումով, ՀԵԱԵ-ին կը շեշտէ Աստուածաշունչ մատեանի եւ անոր պարփակող ճշմարտութիւններու բացարձակ հեղինակութիւնը մարդկային հոգեւոր ու բարոյական չափանիշներու որոշման մէջ, իր ազգային պատկանելիութեան անխախտ համոզումը, Ա. Պետրոս 2:17ի Քրիստոնէական «Եղբայրութիւնը սիրեցէ՛ք...»ի Սբ. Գրային յորդորը ու վերջապէս Քրիստոսի տիեզերական մարմնի՝ եկեղեցիին մէկ անբաժան մասնիկը ըլլալու դաւանանքը: Հանդիսութեան իր ուղղած պատգամին մէջ, այս տողերն էին որ շեշտեց եկեղեցւոյ պատանեկան եւ մարզական առաքելութիւններու օժանդակ հովիւ եւ օրուան բանախօս՝ Վեր. Վաչէ Սվաճեան, որ ամէն շաբաթամիջի, իր օգնականներու հետ միասին, հոգեւոր եւ ընկերային ապահով մթնոլորտ մը կը ստեղծեն մասնակցող 100է աւելի պատանի-պարմանուհիներու եւ անոնց կը փոխանցեն կեանքը Աստուածաշնչեան դիտանկիւնէն հասկնալու եւ ապրելու պատգամները:*

*50 Ամեակի հանդիսութեան յայտագիրը, որուն հանդիսավարն էր Արի Էքմէքճեան, կ՛ընդգրկէր ճոխ գեղարուեստական մաս՝ քանոնի վրայ հայկական իւրայատուկ երաժշտութիւն մեկնաբանող Տիկ. Նեկտարինէ Սաֆարեանի կողմէ,*

Շար.ը էջ 19

## Փա՛ռք Հայերէնի Ուսուցիչին

*Հայապահպանում եւ հայեցի դաստիարակութիւն կարելի չէ իրականացնել առանց հայերէնի ուսուցիչին, որ այդ պատմական առաքելութեան հիմնական սպասաւորն է: Այս բարձր գիտակցութեամբ եւ համոզումով է որ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Արեւմտեան Թեմի Առաջնորդարանի «ԶՈՒԱՐԹՆՈՑ» Մշակութային Յանձնախումբը իր հիմնադրութեան տասնմէկերորդ տարեդարձին առթիւ կազմակերպած է յատուկ հանդիսութիւն մը:*

*Հանդիսութեան ընթացքին պիտի գնահատուին ուսուցիչ-ուսուցչուհիներ, որոնք այս ափերուն մեծ վաստակ ունեցած են Հայոց լեզուի, Հայ գրականութեան եւ Հայոց պատմութեան առարկաներու դասաւանդման մէջ: Այս անգամ գնահատանքի պիտի արժանանան Քալիֆորնիոյ Կլենտէյլ քաղաքի հանրային (Public) դպրոցներու մէջ դասաւանդող մեր ուսուցիչ-ուսուցչուհիները:*

*Յոյժ ողջունելի հանդիսութիւն մը անտարակոյս, որովհետեւ հայերէնի, հայ գրականութեան եւ հայոց պատմութեան ուսուցիչը լոկ գործ մը չէ, որ կը կատարէ ան, այլ ան իր ամբողջ էութեամբ կը սպասարկէ հայ մանուկին ու աշակերտին հայակերտման նուիրական գործին:*

*Գնահատանքի հանդիսութիւնը նուիրուած է Հայ գրականութեան գոհարներուն ընդմէջէն հայեցի կրթութեամբ բազմաթիւ սփիւռքահայ սերունդներ դաստիարակած վաստակաշատ մանկավարժ, բանաստեղծ, դասախօս եւ մեծ հայրենասէր ՎԱՀԷ-ՎԱՀԵԱՆԻՆ:*

*Օրուան գլխաւոր պատգամաբերներն են՝*

*Դոկտ. Մինաս Գոճայեան (Վահէ-Վահեան գրագէտը)*

*Տոքթ. Կիրակոս Մինասեան (մարդը եւ ուսուցիչը):*

*Հայ հասարակութիւնը անխտիր հրաւիրուած է գնահատման եւ մեծարման հանդիսութեան, որուն ընթացքին պիտի ներկայացուի նաեւ գեղարուեստական բարձրորակ յայտագիր մը՝ երգ, պար, ասմունք, նուագ, եւ պիտի կատարուի նաեւ պատշաճ հիւրասիրութիւն մը:*

*Հանդիսութիւնը տեղի կունենայ Դեկտեմբերի 11-ին, երեկոյեան ժամը 6-ին, Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ «ԿԻՐԱԿՈՍ» սրահին մէջ:*

*(2215 E. Colorado Blvd., Pasadena 91107)*




# Massis Weekly

**Volume 42, No. 45** **Saturday, December 3, 2022**

## PM Pashinyan Refuses to Sign CSTO Declarations



YEREVAN — Armenia's Prime Minister Nikol Pashinyan refused on Wednesday to sign a declaration adopted by the leaders of the Collective Security Treaty Organization (CSTO) at a gathering in Yerevan after failing to include an agreement on providing defense aid to Armenia following Azerbaijan's aggression.

"The absence of a clear political assessment of the situation by the CSTO and a decision on the above-mentioned may mean not only the refusal of the CSTO from its alliance obligations, but also be interpreted by Azerbaijan as a green light from the CSTO for further aggression against Armenia. And this contradicts not only the letter, but also the spirit and meaning of the fundamental documents of the CSTO," Pashinyan explained.

Belarusian President Alexander Lukashenko said Armenia's negotiators proposed adding two points to the declaration, but "we decided not to accept them." He did not elaborate on the matter, though he did project optimism at the prospect of Armenia and Azerbaijan reaching a peace deal, which has eluded negotiators for over three decades.

Pashinyan said because of these failures he was not ready "to sign these documents.' The prime minister said that during the past two years, Armenia, which is a CSTO member, has been subjected to aggression by Azerbaijan at least three times.

"It is regrettable that Armenia's membership in the CSTO did not re-

**Continued on page 4**

## Baku Responds to Armenia's Proposals for Peace Treaty – FM Ararat Mirzoyana



YEREVAN — Armenian Foreign Minister Ararat Mirzoyan spoke today about the course of negotiations with Azerbaijan on a draft peace treaty.

"As you know, we submitted to Azerbaijan our proposals on the normalization of relations and received their answers only yesterday. So discussions are continuing. We hope to reach an agreement on this issue as soon as possible. The mediation efforts of our international partners can also play an important role in this process," Mirzoyan told Armenpress.

Mirzoyan declined to disclose the proposals which he presented to his Azerbaijani counterpart Jeyhun Bayramov in Washington on November 7. Nor did he say whether they were accepted by the Azerbaijani side.

Earlier this year, Baku put forward five key elements of the peace treaty acceptable to it. They include mutual recognition of each other's territorial integrity.

In response to these proposals Armenian Foreign Minister Ararat Mirzoyan said earlier they were acceptable. However, according to him, the Azerbaijani proposals did not fully reflect the entire agenda of the existing problems.

He said for the Armenian side it was fundamentally important that the

**Continued on page 4**

## Aliyev Cancels Planned Meeting With Pashinyan Over Macron's Mediation

BAKU — Azerbaijan's President Ilham Aliyev said on Friday that he has cancelled upcoming fresh talks with Prime Minister Nikol Pashinyan because the latter wants French President Emmanuel Macron to also attend them.

He said that France can no longer mediate Armenian-Azerbaijani negotiations because of Macron's recent pro-Armenian comments and "anti-Azerbaijani" resolutions adopted by French lawmakers.

Aliyev and Pashinyan were scheduled to meet in Brussels on December 7 for further talks hosted by the European Union's top official, Charles Michel.

"Yesterday [the Azerbaijani presidential aide] Hikmet Hajiyev informed me that he has been contacted by the office of Charles Michel and told that Armenian Prime Minister Nikol Pashinyan is willing to meet only with the participation of French President Macron," Aliyev told an international conference in Baku. "This means that the meeting will not take place."

"We will discuss alternatives," he said. "We will see who will assume the role of a mediator and on what platform."

Aliyev claimed that Pashinyan set that condition in order to drag out the negotiating process and prevent the signing of an Armenian-Azerbaijani peace treaty sought by Baku.

The Armenian Foreign Ministry confirmed that Yerevan wants Macron to take part in the Brussels summit. It argued that Aliyev and Pashinyan met in Prague on October 6 in the presence of both Michel and Macron.

"It is logical that the format and the composition of the meeting should remain the same. All the statements of the Azerbaijani side that the Armenian side is trying to disrupt the meeting and the peace process have no connection with reality. Armenia is ready for the meeting on December 7 in line with the agreement and the format reached in Prague," he said.

Accordingly, Hunanian denied that Yerevan is torpedoing the peace process.

At the same time, Hunanyan noted that Azerbaijan has not responded to Armenian proposals for concluding a peace treaty.

## Armenian Fund's 25th Telethon Results




On November 24th, the Hayastan All Armenian Fund held its 25th annual Telethon under the slogan "We Develop Dynamic Communities", which raised USD 11,003,439.51 as of today. The Fund's worldwide fundraising events are still ongoing, and the results will be announced at the end of the year.

The donations received for the Telethon-2022 are as follows:

Armenia and Artsakh- $ 1,000,280.51,
United Sttaes – $ 5,000,250,
France- $ 3,284,000,
Great Britain-USD 700 000,
Toronto (Canada)- $ 547,272.

Donations have been received also from

Montreal (Canada)- $ 204,000,
Brazil- $ 100,000,
Switzerland- $ 80,000,
Germany- $ 52,660,
Argentina- $ 25,000,
Austria- $ 6,144,
Romania- $ 3,833.

The amounts raised during "We Develop Dynamic Communities" Telethon will be used for the healthcare, social, educational, cultural and infrastructure rehabilitation projects in the border communities of our Homeland, as

# Armenian Government to Create Interior Ministry



YEREVAN — The Armenian government on Thursday formally decided to set up a ministry of interior as part of a major structural reform of the national police and two other agencies.

Armenia had an interior ministry until former President Robert Kocharyan abolished it and turned the police into a separate structure subordinate to him two decades ago. The police have reported to the prime minister since Kocharyan's successor, Serzh Sarkisyan, completed the country's transition to a parliamentary system of government in 2018.

The Armenian Ministry of Justice recommended the re-establishment of the interior ministry headed by a full-fledged cabinet member in a three-year strategy of police reforms proposed to the government in 2020. Prime Minister Nikol Pashinyan signaled his approval of the idea in February 2021 but did not rush to put it into practice.

The ministry revived the idea this summer before drafting a package of amendments to more than three dozen laws. The government endorsed the proposed amendments and decided to send them to the Armenian parliament for approval on Thursday.

"The interior ministry will comprise three major services: the police, the rescue service and the migration and citizenship service," acting Justice Minister Grigor Minasyan said during a weekly cabinet meeting chaired by Pashinian.

The rescue service is currently part of the existing Ministry of Emergencies. In Minasyan's words, the ministry will be abolished as a result of the forthcoming structural change.

PM Pashinyan said that the creation of the interior ministry is primarily aimed at "increasing the effectiveness of the work of the police." He did say who will likely run it.

# Secretary of Armenia's Security Council Discusses Issues of Regional and International Security with French Officials



PARIS -- On a working visit to Paris, Secretary of Armenia's Security Council Armen Grigoryan met with Isabelle Dumont, Adviser to French President for Continental Europe and Turkey, Frédéric Mondoloni, Director of the Continental Europe Department of the French Foreign Ministry, Christophe Lucas, Deputy Head of the Department of International Relations and Strategic Planning of the Ministry of Defense of France, and OSCE Minsk Group French Co-Chair Brice Roquefeuil.

At the meeting, the interlocutors exchanged views on a number of issues of the international and regional security agenda of mutual interest. The Secretary of the Security Council reaffirmed Armenia's readiness to contribute to the security environment in our region.

The interlocutors commended the dynamics of development of Armenia-France bilateral multi-sector relations, which have intensified recently. An agreement was reached to continue the dialogue aimed at the development of bilateral relations in various fields.

# Artsakh Human Rights Defender Reunification with Mother Armenia Has Always Been the Cherished Dream of Artsakh Armenians



STEPANAKERT — The cherished dream of Artsakh (Nagorno-Karabakh) Armenians has always been reunification with mother Armenia, Artsakh human rights defender Gegham Stepanyan said in a Facebook post.

His comment comes in retaliation to Artsakh newly appointed sate minister (equivalent of prime minister) Ruben Vardnayna's claims that 'Artsakh people would never become just a part of Armenia, one of its regions.' In an interview with Russian RTVI Vardanyan said that 'the Artsakh issue is a complex issue that requires quite serious work."

"It was the cherished dream of reunification with the motherland that brought Artsakh Armenians to the square in 1988. Although first public demands for reunification were expressed in 1988, Artsakh intellectuals had voided that demand in letters addressed to the Soviet central authorities long before. Armenians have united in Artsakh, Armenia, Javakhk (the Armenian-populated region in Georgia), the Diaspora and everywhere else to fight for reunification of Artsakh with its mother Armenia," Stepanyan stated.

According to him, during the 30-year struggle all sacrifices and hardships have been and are for the realization of this important goal.

"It is these simple realities that allow us to assert that the Artsakh movement is not separatism, it is not an end in itself, but a natural aspiration and the right of a part of the nation to join the Motherland from which they were artificially and unjustly separated," the human rights defender stressed.

Billionaire and social entrepreneur Ruben Vardanyan renounced in early September his Russian citizenship and moved to Artsakh (Nagorno-Karabakh) to take up as state minister. In an interview with the Russian daily 'Kommersant' published in early November, Vardanyan said that Armenia's government has no mandate to negotiate on behalf of Karabakh and single-handedly decide its future.

# Switzerland "Intends to Protect and Reestablish Livelihoods of People Living in Border Areas in Armenia" – Ambassador




YEREVAN -- The Swiss Agency for Development and Cooperation SDC has approved CHF 960,000 in aid for Armenia to improve border communities' resilience towards crisis situations. Partnering with the World Food Programme (WFP) for implementation, Switzerland provides immediate humanitarian and long-term economic support to Gegharkunik, Vayots Dzor and Syunik with the "Resilience and Economic Recovery of Border Communities in Armenia – REBCA" project.

The Swiss Agency for Development and Cooperation signed the REBCA project today with the World Food Programme (WFP).

Ambassador of Switzerland in Armenia Lukas Rosenkranz delivered remarks at the signing ceremony.

"Armenia's recent progress with its socio-economic reform agenda has been challenged by external factors such as COVID-19, military conflict in 2020, and international economic shocks particularly from the war in Ukraine. Furthermore, the military escalation of last September had significant impact on 6 communities in the three Eastern regions of Gegharkunik, Vayots Dzor and Syunik.' These municipalities include over 130 settle-

Continued on page 4

# Lemkin Institute Supports Artsakh People's Right to Self-Determination to Avoid Genocide

The Lemkin Institute has voiced its solidarity with and support for the people of the Republic of Artsakh, who turned out in Stepanakert on October 30th in historic numbers to rally for self-determination.

In a statement the Institute reminds that Artsakh has been inhabited by a majority Armenian population for thousands of years, and mentions of Armenians in the region date back at least to the 6th century BCE.

The Institute briefly presented the history of the region and the Artsakh wars.

"At the heart of this conflict are two factors that are common in genocidal scenarios: The

weakening of one group or groups through genocide and the continuing impunity (and genocidal ideology) of perpetrator groups. In this case, we have, on the one hand, the consequences of the Armenian genocide in the region, which completely eradicated the Armenian presence in Western Armenia (today's eastern Turkey) and substantially reduced Armenians' fighting capacity and political leverage in the Caucasus in the late 1910s and early 1920s. On the other hand, we have the development of Azeri nationalism as an anti-Armenian phenomena and the ongoing and unchecked genocidal hostility of Azeri nationalists towards Armenians. Neither of these issues should be ignored by the international community in constructing policy towards the region," the statement reads.

The Lemkin Institute says "there seems to be the misperception among many members of the international community that Artsakh should simply be "given up" — handed over to Azerbaijan due to the territorial losses suffered by Armenians in 2020."

"In fact, many Western governments seem to be promoting policies that will lead to Azerbaijani control over Artsakh in the name of "peace" and "prosperity," two terms repeatedly used by US officials at a November 16 Senate Foreign Relations Committee hearing on "Assessing U.S. Policy in the Caucasus." The origin of this Western view is, once again, a desire to please Turkey and to gain access to Caucasus oil as well as to strategic positions in Central Asia. Such a view negates Artsakhsis' legitimate right to self-determination and risks collusion with a genocidal state."

It emphasizes that "What the Western world, and particularly NATO, fails to understand is that "giving up" Artsakh would mean condoning genocide against Armenians: the forced displacement and persecution of Armenians, widespread atrocity crimes, destruction of cultural heritage, and one of the largest humanitarian crises in the Caucasus region in the past decades, involving a huge influx of refugees to Armenia proper."

"Importantly, given the current red flags for genocide in Turkey and Azerbaijan, as well as what we know about the genocidal process in general, it is inconceivable that "giving up" Artsakh will put an end to conflict in the region, much less lead to "peace" and "prosperity." The genocidal designs of Azerbaijan and its strong ally Turkey almost ensure that aggression against Armenian territory will continue. The anti-Armenian hatred promoted by both countries, and especially by the Aliyev regime, will not abate with the depopulation of Artsakh," the statement reads.

It notes that the depopulation of Artsakh should be seen as the beginning of a much larger push to erase the Armenian presence from the region once and for all.

"The people of Artsakh deserve to have their calls for self-determination heard and taken seriously by the international community," the Institute sayd, reminding that the right to self-determination is one of the most important fundamentals of the international legal system along with the equal sovereignty and territorial integrity of states.

"The fundamental right to self-determination should not become another legal fiction; instead, it should be understood as an essential element of lasting international peace and security. Furthermore, the international community's responsibility to protect identity groups is an essential norm that must be exercised in this case, where the world has the rare chance to prevent genocide before mass killing has begun," the Lemkin Institute notes.

"Only when these rights are fully protected and respected will the world be able to fulfill the long-awaited promises of the United Nations Charter," it says.

The Lemkin Institute calls for the creation of an independent international commission to study the issues involved in Artsakh, with the aim of establishing a just outcome and a stable peace.

"Azerbaijan must not be allowed to use force to claim Armenian territory and the international community must make clear that it will vigorously defend Armenian life against a renewal of the genocide of 1915," the statement concludes.

# Exhibition at European Parliament Showcases the Destruction of Armenian Heritage of Artsakh



An exhibition on endangered heritage of Artsakh opened at the European parliament at the initiative of MEP Nathalie Loiseau on November 28.

The exhibition showcases the destruction and eradication of Armenian heritage of Nagorno-Karabakh.

Addressing the event were MEP Nathalie Loiseau, Armenia's Ambassador to Belgium/Head of the Mission to the European Union Anna Aghajanyan and Director of the Diplomatic School Vahe Gabrielyan.

The exhibition will continue through December 1.

# Israeli Soldiers Accused of Spitting at Armenian Archbishop in Jerusalem Procession



JERUSALEM -- Soldiers from the Israel Defense Forces' Givati Brigade are suspected of spitting toward the Armenian archbishop and other pilgrims during a procession earlier this month in the Old City of Jerusalem, the Times of Israel reports, quoting Haaretz.

It is the latest in a series of incidents of controversial behavior by soldiers in the infantry unit over the past month.

According to the report, two soldiers were detained by police on the spot and a total of three were later probed by the IDF.

The military has decided two soldiers will face disciplinary action for "behaving disrespectfully," without detailing the accusation.

Church officials said that on November 7, Archbishop Sevan Gharibian, the Grand Sacristan of the Armenian Apostolic Patriarchate of Jerusalem, along with other senior officials, was leading a procession including pilgrims from abroad to mark the Feast of the Cross.

The parade set off from the Church of the Holy Sepulchre and when it reached the area of the souk it passed by some Givati soldiers, some of whom allegedly spat at the participants and the cross they were carrying.

Chancellor of the Armenian Patriarchate of Jerusalem Koryun Baghdasaryan told Haaretz that although the church has encountered such behavior in the past from religious Jews in Jerusalem, "this is the first time that soldiers have spat at us, on the cross and priests who were there."

Israel Police officers who were escorting the procession detained two soldiers, one of whom was released after questioning. The police investigation is still ongoing.

# "Microhistories of the Armenian Genocide" by Dr. Ümit Kurt



FRESNO -- Dr. Ümit Kurt will give a presentation on "Microhistories of the Armenian Genocide" at 7:00PM on Friday, December 9, 2022, in the University Business Center, Alice Peters Auditorium, on the Fresno State campus. The event is organized by the Armenian Studies Program at Fresno State.

The Armenian Genocide was a mass violence event committed by a wide–ranging group of perpetrators. The individuals who were involved in this atrocity did so in line with their own decisions, regardless of the circumstances, making individual responsibility a pertinent concept. Alleging that this mass violence was committed only by a group headed by the CUP or Talat Pasha (infamously known as the architect of the genocide) causes us to, primarily, disregard the aggregate dimension of the Genocide itself as well as the individual and collective responsibilities of those who partook of their own free will.

It becomes necessary to construct a new paradigm in this regard by shifting our point of focus from CUP elites to local (and grass-roots perpetrators), as the responsibility for the destruction of Ottoman Armenians is not limited to merely the central government, CUP dignitaries, or Talat Pasha.

Research into the micro-history of the Armenian genocide has made use of various often neglected or overlooked primary sources to shed light on the fate of survivors, as well as the many more who perished. Rather than relying on the secondary literature examining this part of Asia Minor with a macro-level focus, uncovering underutilized archival documents grants passage to the largely unknown world of the localities. This lecture focuses on the scholarship about genocidal activity at the local level(s) and different regions and the destruction of the Ottoman Armenians from the perspective of microhistories.

Ümit Kurt is Assistant Professor in the School of Humanities, Creative Industry, and Social Sciences (History) and an affiliate of the Centre for the Study of Violence at the University of Newcastle, Australia. A former Polonsky Fellow at the Van Leer Jerusalem Institute, he is the author The Armenians of Aintab: The Economics of Genocide in an Ottoman Province (Harvard University Press, 2021; received PROSE Award Finalist in the category of World History by Association of American Publishers), Antep 1915: Genocide and Perpetrators (Ilesitim, 2018) and the coauthor of The Spirit of the Laws: The Plunder of Wealth in the Armenian Genocide (Berghahn, 2015). He is the co-editor of the volumes of Armenians and Kurds in the Late Ottoman Empire (Armenian Series of The Press at California State University, Fresno, 2020) and The Committee of Union and Progress: Founders, Ideology, and Structure (Armenian Series of The Press at California State University, Fresno, 2021).

Dr. Kurt's book The Armenians of Aintab: The Economics of Genocide in an Ottoman Province will be on sale at the event.

The lecture is free and open to the public. Parking is available in Fresno State Lots P6 and P5, near the University Business Center, Fresno State. A free parking code can be obtained by contacting the Armenian Studies Program.

For information about upcoming Armenian Studies Program presentations, please follow us on our Facebook page, @ArmenianStudiesFresnoState or at the Program website, https://fresnostate.edu/armenianstudies.

# Movie About Armenian Genocide Survivor Included in Official Competition Program of Italian International Film Festival




The feature "Amerikatsi" directed by Michael Goorjian has been included in the official competition program of the SALERNO International Film Festival held in Italy, the National Cinema Center of Armenia said.

The screening of the film is scheduled for December the 1st.

The film tells the story of Charlie, a young Armenian who escaped the Armenian Genocide and found shelter in the United States. His family was not so lucky. The story begins in 1947, as Charlie repatriates back to Armenia just to be greeted by the harsh reality of Soviet Communism. Almost immediately Charlie is arrested and sentenced to prison.

Director and scriptwriter - Michael A. Goorjian, cameraman- Ghasem Ebrahimian, actors- Hovik Keuchkerian, Mikhail Trukhin, Nelli Uvarova, Jean-Pierre Nshanyan, film producers- Arman Nshanyan, Sol Tryon, Patrick Malkhassian, Ani Vorskanyan, production company- PEOPLE OF AR Productions.

# PM Pashinyan Refuses to Sign

Continued from page 1

strain Azerbaijan from resorting to aggressive actions, and furthermore, basically until today, we were unable to make a decision regarding the CSTO's response to Azerbaijan's aggression against Armenia," added Pashinyan.

Pashinyan said also that Armenia expects the CSTO to accelerate the necessary political and diplomatic work with Azerbaijan to ensure the immediate and unconditional withdrawal of Azerbaijani troops from the sovereign territory of the Republic of Armenia to their original positions as of May 11, 2021.

He stressed that such a position is important not only to restore the territorial integrity of the Republic of Armenia, but also to deter Azerbaijan from further aggressive actions against our country.

The Armenian premier expressed hope on Thursday that both documents vetoed by him will be amended and approved by all member states.

"Despite the fact that the CSTO summit declaration was not adopted … and a decision regarding the CSTO's reaction to the September 13 escalation [on the border] was not approved, also because we refused to sign it, I repeat that I regard the discussion as largely positive," Pashinyan told a weekly meeting of his cabinet.

"I also consider as positive negotiations held with Russia in a bilateral format and hope that the understandings reached will be implemented as soon as possible," he said in an apparent reference to his late-night meeting with Russian President Vladimir Putin held right after the summit.

"We still hope that our partners will come to their senses and realize that Armenia's border is also the CSTO's border," said Alen Simonyan, the Armenian parliament speaker.

"The Armenian authorities have not come to terms and will not come to terms with this inactivity," Simonyan told RFE/RL's Armenian Service.

He made clear at the same time that Yerevan still has no plans to leave the organization.

# Switzerland Intends to Protect

Continued from page 2

ments, with a total population of over 130'000 people.

40 % of these settlements and 70 % of their population live in the immediate vicinity of the border. As a result of the mentioned military escalation, around 90,000 persons still face serious problems today, including with regards to food-security and economic livelihood.

With the project that we are launching today, Switzerland, together with the project's implementing partner, the World Food Program, intends to protect and reestablish livelihoods of people living in border areas in Armenia, in close cooperation with the Armenian authorities, among them the Ministry of Labor and Social Affairs and the Ministry of Territorial Administration and Infrastructure. The project will target 15 border settlement of Vardenis, Sisian and Jermuk communities; Switzerland will spend 960'000 CHF (around 1 Mio USD) for this purpose. I wish to underline that this project stands in the tradition of Swiss humanitarian assistance to Armenia, which started with the Spitak earthquake of 1988. Regarding this humanitarian engagement, I would like to recall that Switzerland is a long-standing major contributor to the International Committee of the Red Cross for its mandate in Armenia and in other countries and that the Swiss Confederation has partnered for many years with the Swiss Red Cross on behalf of vulnerable families in Armenia. Furthermore, the Swiss Development and Cooperation Agency is also closely cooperating with Armenian Ministry of Emergency, supporting Armenia in building up a local and central system for rescue and response. So I am very happy to launch this project today with the signature of the necessary formalities. The project translates principles and objectives of Switzerland's foreign policy and development cooperation into action. With its Swiss Cooperation Programme for the South Caucasus 2022 - 2025, Switzerland supports the transition of Armenia towards a market economy and inclusive economic development," the Swiss Ambassador said.

# Baku Responds to Armenia's Proposals

Continued from page 1

rights and freedoms of the Armenians of Artsakh (Nagorno-Karabakh) were clearly guaranteed, and the status of Nagorno-Karabakh was finally clarified.

"For us, the Nagorno-Karabakh conflict is not a territorial issue, but a question of rights. As we have already reported, the Armenian side responded to the Azerbaijani proposal emphasizing this position," Mirzoyan said.

The Armenian side's proposals touch upon such issues as territorial claims, guarantees to Artsakh Armenians, trilateral statements between Russia, Armenia and Azerbaijan, negotiations on the Armenian-Azerbaijani peace agreement.

The approach of the Armenian side is that these two packages be combined and negotiations started around a peace treaty to find a long-term solution to the Nagorno-Karabakh conflict.

The Azerbaijani reply reported by Mirzoyan came two days after Azerbaijan's President Ilham Aliyev cancelled a meeting with Prime Minister Nikol Pashinyan which was due to take place in Brussels on December 7. He complained that Pashinyan wants French President Emmanuel Macron to also participate in it along with European Union chief Charles Michel.

# Թափուր Գրասենեակը (Ժիրայր Դանիէլեանի Յիշատակին)



*Հեռաւոր ԱՄՆ-ի Պոսթըն քաղաքին մէջ, ամերիկեան ցուրտ հողը պիտի գրկէ պատկառազդու հայ մտաւորականի մը յոգնաբեկ մարմինը:*

*Ինչ սրտաբեկիչ է խօսիլ ու գրել անձնաւորութեան մը մասին, որ դեռ երէկ կեանքոտ ժպիտ էր ու կատակ, կը վազվզէր գրասենեակէ գրադարան, կ'ոստոստէր գիրքերու եւ թերթերու հաւաքածոներու մէջ, գրասեղաններու շուրջ համբերատար ժողովական էր ու իմաստուն խորհրդատու, փորձառու կրթական մշակ էր եւ ժամանակակից հայ գրողներու կեանքին ու գործերուն լաւագիտակ, հմուտ մատենագէտ էր եւ տարիներու տնօրէն ու կրթական մշակ, ի բնէ խմբագիր եւ հայ մամուլին ամենամօտիկ հետեւող, հաճելի խօսակից եւ փնտռուած զրուցակից, միութենական, բարեկամ ու ընկեր շատ շատերու, ամուսին, հայր, մեծ հայր, ամբողջական մտաւորական մը ու հայրենի հողին ջերմ հաւատացող եւ... Կիլիկիոյ Հաճըն արծուեբոյնին հպարտ շառաւիղներէն:*

*Անկարելի էր ճանչնալ Ժիրայր Դանիէլեանը եւ չտպաւորուիլ իրմով: Ամէն զրոյց անոր հետ առիթ մըն էր բան մը սորվելու, գիտելիքներուդ վրայ մասնիկ մը աւելցնելու, սրամտութեամբ համեմուած խօս քերէն տրամադրութիւնդ բարձրացնելու եւ ապա՝ յաջորդ հանդիպում մը եւս ունենալու ցանկութեամբ՝ ակամայ «ցտեսութիւն» ըսելու: Ի՞նչպէս յագենալ ծով գիտելիքներ պաշարած անձի մը հետ խօսակցելէ. շրջուն գանձարան մը արդարեւ, որուն ներկայութիւնը սրահ մը կը լեցնէր, իսկ այսօր՝ բացակայութիւնը՝ ամայութեան տրտմութիւնը կը յուշէ...*

*Բացի ընտանեկան հանդիպումներէ, տակաւին պատանի, առիթ ունեցած եմ գտնուելու իր բնակարանը. աւելի ստուգիւ՝ գրադարանտունը, որուն անհնար էր «չնախանձիլ». գիրքերով ծեփուն պատեր, աջ-ձախ գիրքեր եւ պարբերականներու կուտակուած համարներ. գրասեղանին վրայ՝ դարձեալ գիրքեր ու թերթեր: Տասնեակ տարիներ ետք՝ երբ հարցուցի բնակարանին կացութեան մասին, ժպիտով էր պատասխանը՝ տունը տեղ չմնաց նոր գիրքեր ամբարելու...:*

*2019-ի Յուլիսին, Անթիլիասի մէջ կայացած հայ մամուլի համահայկական համագումարին (որուն կազմակերպիչներէն էր ինք), երբ միասին ուղղուեցանք Կաթողիկոսարանի իր գրասենեակը, նոյնն էր վիճակը՝ լեռնակուտակ հաստափոր գիրքեր, նորատիպ հատորներ, պարբերականներ, որոնց կրկնօրինակներէն պատրաստ էր տալու սիրայօժար կերպով:*

*Ան, տասնամեակներու ընթացքին, դարձաւ լիբանանահայութեան մտաւորական կեանքի հեղինակաւոր դէմքերէն: Խմբագրեց բազմաթիւ հատորներ լիբանանահայ թէ հայրենի գրողներէ, ինչպէս՝ Սարգիս Արմէն, Գառնիկ Ադդարեան, Արմէն Դարեան, Գուրգէն Մահարի, Վարդգէս Պետրոսեան, Բագրատ Ուլուբաբեան եւ ուրիշներ. եղաւ առանցքային ուժերէն մշակութային-գրական կեանքին՝ դասախօսութիւններով, ելոյթներով, կազմակերպչական նախաձեռնութիւններով: Քաջալերող էր երիտասարդ տարրերու եւ կ'աշխատակցէր մամուլին՝ հմտալից եւ շահեկան յօդուածներով: Յաճախ կ'այցելէր «Արարատ» օրաթերթ եւ ցանցառադէպ կ'աշխատակցէր թերթին՝ մանաւանդ բացառիկ թիւերուն: Իր անունը աւելի առնչուած մնաց «Շիրակ» գրական հանդէսին, Հայկազեան Հայագիտական Հանդէսին: Ուշագրաւ է նաեւ իր ներկայութիւնը 70-ական թուականներու նորարար ու յեղափոխաշունչ «Երիտասարդ Հայ.»-ի խմբագրական կազմէն ներս, որ իր օրին նոր երանգ կը հաղորդէր օրուան յախուռն մթնոլորտին: Ան հրատարակեց բազմաթիւ հատորներ մատենագիտական, գրականագիտական եւ բանասիրական բնոյթի, որոնք մնայուն արժէքներ են անտարակոյս: Կատարեց նաեւ մատենագիտական սրբագրութիւններ կարգ մը հատորներու՝ իր բծախնդիր եւ բարեխիղճ պրպտումներով: Լիբանանահայ դպրոցին մասին հրապարակած իր յօդուածաշարքը (2002) կարեւոր փաստաթուղթ պիտի մնայ գաղութին պատմութեամբ հետաքրքրուողներուն համար:*

*2005-ին, գրասէր շրջանակը հաճելի անակնկալի մը դէմ յանդիման գտաւ ինքզինք: Հրապարակուեցաւ «Կամար» գրական պարբերականին անդրանիկ թիւը Ժիրայր Դանիէլեանի խմբագրապետութեամբ: Որակաւոր, բովանդակալից, գեղատիպ ու ճաշակաւոր գրական հանդէսը իր շուրջ խմբեց սփիւռքահայ եւ հայրենի մտաւորականներու ընտրանի մը: «Կամար»ը սփիւռք-հայրենիք հատուածները կամրջող կամարն էր որ կը խորհրդանշէր: Հանդէսը դարձաւ անոր խմբագիրին տաբերքը: Գրական երեւոյթ մը աներկեւան:*

*Թորոս Թորանեան իր «Ապրող Մարդեր» (1991) գիրքին մէջ Ժ. Դանիէլեանին համար կը գրէր՝ «Նոր Մը, Որ Շաղկապուած է Թէ՛ Նորին Թէ՛ Հինին» եւ այդ նորը տարիներու ընթացքին դարձաւ երէց սերունդի պատկառելի անձնաւորութիւններէն մին: Ան հակառակ իր չեշտըւած քաղաքական ուղղուածութեան, մնաց հորիզոնական յարաբերութիւնները պահպանող դէմք մը՝ բոլոր շերտերուն հետ գործակցող, «լեզու գտնող» իր բարեհամբոյր եւ հեզաբարոյ շաղուածքով: Եւ ահա եկաւ անսպասելի հարուածը՝ Պէյրութի նաւահանգիստին պայթումը (4 Օգոստոս 2020), որուն զոհերէն դարձաւ Ժիրայր Դանիէլեան՝ նոյնինքն իր բնակարանին մէջ՝ կորսնցնելով իր աչքերուն այնքա՜ն թանկագին լոյսը: Իրօք, սա ցաւալի բեկումն էր իր կեանքին: Ա՛ ղէտ մը հայ մտաւորականութեան համար: Փոխադրուեցաւ ԱՄՆ՝ դուստ րերուն մօտ, դարմանումի եւ ապա վերադառնալու իր լքեալ գրասենեակը: Սակայն գնաց... խառնուելու օտարոտի խորթ հողին: Հաճընէն Պոսթըն՝ տարաբախտ հայու տարօրինակ պատմութիւն...*

*«Կամար»-ի 32-րդ թիւին (2019) խմբագրականը խորագրուած է՝ «Հայ Գիրքին Ու Գրադարաններուն Ապագան...», ուր կայ եռատող մէջբերում մը բանաստեղծ Մուշեղ Իշխանէն՝*

*Ձեզ որբ կը ձգեմ ու կ'երթամ անյագ,*

*Հայոց դպրութեան դուք հա՛յ մատեաններ,*

*Պիտի դուք, աւա՜ղ, մնա՛ք անժառանգ...*

*Ահաւասիկ խմբագրականին վերջին տողը՝ «Եւ լաւ է, որ Մուշեղ Իշխան երեսուն տարի առաջ դարձաւ անդենականի բնակիչ...»: Աւա՜ղ, այսօր, ա՛յս տողին հեղինակը եւս դարձաւ անդենականի բնակիչ...:*

*Մինչ Պոսթընի մէջ վերջին հրաժեշտը պիտի տան Ժիրայր Դանիէլեանին՝ Պէյրութի մէջ տակաւին թափուր է իր գրասենեակը, կ'ողբայ իր գրասեղանը, կ'արտասուեն իր սրտի հատորները, իրենց տիրոջ կը սպասեն իր գուրգուրանքին արժանացած հազարաւոր մատեանները, գինք կը սպասեն իր գրչեղբայրները, կրտսեր գործակիցները, սաներն ու սանուհիները, աշակերտներն ու ընթերցողները, միտքի ու գրիչի գինակիցները...:*

*Ափսո՜ս. թափուր է գրասենեակը եւ թափուր պիտի մնայ ընդմիշտ...:*

*Ա. Ռ*
*«ԱՐԱՐԱՏ»*
*Լիբանան*



# Եղիշէ Չարենցի Ստեղծագործական Ժառանգութիւնը Եւս Մէկ Անգամ Արժեւորուեց եւ Գնահատուեց Գրողի Յոբելեանին Նուիրուած Գիտաժողովի Մեկնարկով



*Հայ գրականութեան ամենավառ ներկայացուցիչներից մէկի՝ Եղիշէ Չարենցի ծննդեան 125-ամեակի շրջանակում Նոյեմբերի 23-ին Հայաստանի գիտութիւնների ազգային ակադեմիայում մեկնարկեց «Չարենցն ու իր ժամանակաշրջանը» խորագրով եռօրեայ հանրապետական գիտաժողովը:*

*«Արմէնպրես»-ի հաղորդմամբ՝ գիտաժողովին թէ՛ գիտնականները, թէ՛ Երեւանի պետական համձալսարանը նոր աւարտած ուսանողներ հանդէս են գալու Չարենցի կեանքին ու գործունէութեանը վերաբերող զեկոյցներով, որոնք կարող են նոր լոյս սփռել նրա թողած հսկայական ժառանգութեան վրայ:*

*Ակադեմիայի հայագիտութեան եւ հասարակական գիտութիւնների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յուրի Սուվարեանի համոզմամբ՝ բանաստեղծական աշխարհը ստեղծել են տաղանդները, սակայն նրանց միշտ առաջնորդել են հանճարները, որոնցից մէկը Եղիշէ Չարենցն է: «Նրա բանաստեղծական աշխարհում զգում ենք, թէ որքան խորն է Չարենցի մտածելակերպը, որքան ազդեցիկ եւ հիմնաւոր են այն գաղափարները, որոնք արտայայտել է իր երկերում: Չարենցը նորարար է թէ՛ բովանդակային առումով, թէ՛ ոճական եւ յատկապէս բառերի ընտրութեան հարցում: Անգամ բարբառային որոշ բառեր, որոնք օգտագործում է իր գործերում, տեղին են ու անվիճելի»,-շեշտեց Սուվարեանն ու յիշեցրեց, որ Չարենցն իր ստեղծագործութիւններով հիմնականում անդրադառնում է հայրենիքի, հայրենասիրութեան, կեանքի եւ աշխարհի յաւիտենականութեան, սիրոյ թեմաներին, որոնք յաւերժական են:*

*Գիտաժողովին, որը կազմակերպուել է ՀՀ կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ սպորտի նախարարութեան աջակցութեամբ, ներկայ էր փոխնախարար Արա Խզմալեանը:*

*Նրա համոզմամբ՝ Չարենցը մեզ համար գոյաբանական կողմնորոշիչ է, գոյաբանական հայեցակարգ է: «Ինչպէս ասում են՝ նա աւելին է, քան պոէտը, եւ նրա ստեղծագործական ժառանգութիւնն աւելին է, քան արուեստն ու մշակոյթը: Չարենցն իր գործերում խտացրել է մեր ազգի տագնապները, մտահոգութիւնները, փակուղիները, բայց եւ խօսել է մեր նուիրական զգացումների՝ հայրենասիրական յղացումների մասին: Նրա՝ «Ես իմ անուշ Հայաստանի» չգերազանցուած գլուխգործոցն այդ ապացոյցներից մէկն է: Հիմա Չարենցին ընթերցելու, վերընթերցելու ամենապատեհ ժամանակներն են»,-շեշտեց Խզմալեանը:*

*Նրա խօսքով՝ Չարենցի ստեղծագործութիւնները կարդալիս կրկին բախւում ենք մեր յաւերժական հարցերին, քան ստանում ենք պատասխաններ ու համոզւում ենք, որ մեր գոյաբանական հարցերը շատ յաճախ շրջապտոյտի մէջ են ու պատմական մի ցիկլ անցնելուց յետոյ յառնում են մեր առջեւ: «Չարենցի երբեմն շատ մռայլ, յոռետեսական գործերում անգամ կայ ուժ, կայ պետութեան քաղաքացի, որն ամուր կանգնած է մեր հողի վրայ: Եթէ մենք ուզում ենք ճանաչել մեր արատները, մեր առանձնայատկութիւնները, մեր թուիչքներն ու մեր ուժը, պէտք է անընդհատ կապի մէջ լինենք Եղիշէ Չարենցի հետ»,-եզրափակեց փոխնախարարը:*

*Գրող, գրականագէտ Դաւիթ Գասպարեանը գիտաժողովին հանդէս եկաւ «Չարենցի պատմականութիւնը» զեկոյցով, որի միջոցով փորձեց ցոյց տալ գրողի վիթխարի ժառանգութիւնն իր ժամանակի հայ գրականութեան մէջ եւ իրենից յետոյ թողած ազդեցութիւնը: «Չարենցն այն հսկան էր, որի արժէքը մենք մինչ օրս չգիտենք: Գիտենք, որ մեծ է, բայց՝ ինչ մեծութիւն ունի, չենք գիտակցում: Նա 20-րդ դարի համաշխարհային գրական մշակոյթը ձեւաւորած անուններից է: Ցետոյ ինչ, որ Նայիրի Զարեանը պէտք է նրա կողքին լինէր եւ Գրական թերթի 32 համարի երկրորդ համարում նրան պէտք է խորհուրդ տար, թէ ինչպէս գրել եւ ինչի մասին գրել, յետոյ ինչ, որ Հրաչեա Քոչարի պէս բոլշեւիկը պէտք է Չարենցի մասին ասէր, որ նա քար է գրականութեան ճանապարհին, որը պէտք է շուտ մի կողմ նետել: Սա ճանապարհ էր, որը պէտք է անցնէր հանճարեղ գրողը»,-շեշտեց գրականագէտը:*

*Օրեր անց լոյս է տեսնելու Դաւիթ Գասպարեանի՝ «Եղիշէ Չարենցի կեանքը եւ ժամանակը» մենագրութիւնը, որն ունի 804 էջ: Գասպարեանը երկար տարիներ է աշխատել գրքի վրայ, որը Չարենցի առաջին գիտական կենսագրութիւնն է:*

*Եղիշէ Չարենցի տուն-թանգարանը յոբելեանական տարուայ ընթացքում հանդէս է եկել բազմաժանր միջոցառումներով, որոնք նախատեսուած են եղել թիրախային տարբեր լսարանների համար, սակայն տուն-թանգարանի տնօրէն Ժաննա Մանուկեանն առանցքային նշանակութիւն է տալիս եռօրեայ գիտական նստաշրջանին՝ նշելով, որ անդրադառնալու են տուն-թանգարանի հիմնադրման նախապատմութեանը, Չարենցի՝ տարբեր ժամանակաշրջաններին վերաբերող ստեղծագործութիւններին:*

*«Տուն-թանգարանը Նոյեմբերը յայտարարել է Չարենցի յիշատակի ամիս, քանի որ մեծ գրողի ծննդեան 125-ամեայ յոբելեանին զուգահեռ Նոյեմբերին լրանում է Չարենցի մահուան 85-րդ տարելիցը, եւ գիտաժողովը ներդրում կ'ունենայ նրա յիշատակը յաւերժացնելու, նրա գրական ժառանգութիւնը վերարժեւորելու գործում»,-ասաց տնօրէնն ու յայտնեց՝ հրատարակելու են գրողի երկերի լիակատար ժողովածուն, որի առաջին հատորի կազման աշխատանքներն արդէն սկսուել են եւ 125-ամեակի աւարտին առաջին հատորը կը լինի գիտական համայնքի սեղանին, իսկ յիշատակի ամիսը կ'ամփոփեն յուշատախտակի բացումով: Չարենցի յուշատախտակը տեղ կը գտնի Մաշտոցի 17 հասցէի շէնքի առաջնապատին, շէնք, որտեղ բանաստեղծն ապրել է կեանքի վերջին երկու տարին:*



*Գիտաժողովը, որն անցկացուելու է Նոյեմբերի 23-25-ը, նախաձեռնել են ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղեանի անուան գրականութեան ինստիտուտը, Երեւանի պետական համալսարանը: Երկրորդ նիստը տեղի կ'ունենա Նոյեմբերի 24-ին ԵՊՀ հայ բանասիրութեան ֆակուլտետում, երրորդ նիստը՝ Նոյեմբերի 25-ին ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղեանի անուան գրականութեան ինստիտուտում:*



## Շնորհանդէս Սագօ Արեանի Նոր Գիրքի՝ «33 Ձայն Իսթանպուլէն»




*Լիբանանահայ ծանօթ լրագրող, այժմ Հայաստան հաստատուած Սագօ Արեան, վերջերս Երեւանի մէջ, հրատարակեց «33 ձայն Իսթանպուլէն» հատորը:*

*Հեղինակը շատ մօտէն ծանօթ ըլլալով պոլսահայ գաղութին, իր այս գիրքը՝ գրեթէ ամբողջութեամբ յատկացուցած է տեղւոյն հայկական հաստատութիւններուն մասնաւորաբար՝ հանրածանօթ անձնաւորութիւններուն:*

*Արդարեւ, անցեալ Կիրակի Նոյեմբերի 27ի երեկոյեան, Պոլսոյ Ֆէրիգիւղ Հայկական Թաղամասի «Շիրինօղլու» սրահին մէջ տեղի ունեցաւ ծանօթ լրագրող եւ հեռատեսիլի հաղորդավար Սագօ Արեանի «33 Ձայն Իսթանպուլէն, ինչպէս ճանչցայ պոլսահայութիւնը» գիրքին շնորհանդէսը:*

*Սոյն միջոցառումը կը հովանաւորէր Թուրքիոյ հայոց պատրիարք Ամեն. Տ. Սահակ Արք. Մաշալեան, ներկայ էին նաեւ Կաթողիկէ Հայոց փոխանորդ Տ. Լեւոն Արք. Զէքիեան, Սեւ Ծովեան տնտեսական համագործակցութեան կազմակերպութեան մօտ Հայաստանի Հանրապետութեան մշտական ներկայացուցիչ Սահակ Սարգսեան եւ այլ հոգեւոր ու աշխարհական անձնաւորութիւններ, որոնք ջերմօրէն ողջունեցին հեղինակը, իր կողակից Անուշ Թրուանցն ու անոնց որդիները:*

*Երեկոյթի յայտագիրը գործադրուեցաւ հանդիսավարութեամբ Գարոլին Մամիկոնեանի: «Ժամանակ» օրաթերթի գլխաւոր խմբագիր Արա Գօչունեան, գիրքը հանգամանօրէն ծանօթացնելու բաժինը վարելով, խօսք առին Սագօ Արեանի գիրքի 33 զրուցակիցներէն՝ լրագրող «Ժամանակ»ի սիւնակագիր Պիանքա Սարըասլան, «Ակօս»ի խմբագիր Բագրատ Էսդուկեան, Ս. Խաչ դպրեվանքի խնամակալութեան ատենապետ Թորոս Ալճան, որոնք մասնակցեցան կենդանի զրոյցին: Արեւմտահայերէնով գրուած այս հրատարակութեան առթիւ խօսակցութիւնները դրուեցան Հայապահպանութեան եւ հայախօսութեան հրատապ օրակարգի հունին մէջ:*

*Ասուլիս-քննարկումէն վերջ սրտի խօսքով հանդէս եկաւ Սագօ Արեան: Ան ի յիշատակ այս ձեռնարկին յուշանուէրներ բերած էր Երեւանէն: Անոնցմէ մին վերապահուած էր Պատրիարք Հօր:*

*Նորին Ամենապատուութիւնը դիտել տուաւ որ Պոլիսը տակաւին հայկական սփիւռքի լաւագոյն օճախներու շարքին կը դասուի եւ կարելի է անով հպարտանալ, որովհետեւ դուրսէն պարզուած պատկերը կը գործէ լաւ տպաւորութիւն: «Բաժակին լեցուն կողմը պէտք է տեսնենք, լաւ իմանալով որ, այդ լեցուն կողմը՝ հետզհետէ կը պակսի» ըսաւ Սրբազան Պատրիարքը:*

*Հայրական խօսքի եզրափակիչ բաժնին մէջ Նորին Ամենապատուութիւնը գնահատանքով արտայայտուեցաւ գիրքի հեղինակին՝ Սագօ Արեանի մասին եւ ըսաւ. «...ան շատ մը պոլսեցիէ մը աւելի լաւ կը ճանչնայ Պոլիսը»: Պատրիարքը բարձր գնահատնքով արտայայտուեցաւ նաեւ «Ժամանակ»ի գլխաւոր խմբագիր Արա Գօչունեանի եւ պոլսահայ համայնքին համար իր բերած նպաստին մասին:*

*Աւարտին՝ Սագօ Արեան մակագրեց իր գիրքերը եւ զուգահեռաբար սարքուած ընդունելութեան մթնոլորտին մէջ ներկաները ջերմօրէն շրջապատեցին Սագօ Արեանը, արտայայտելով իրենց գնահատականը:*

*«ԺԱՄԱՆԱԿ»*
*(յապաւումներով)*

## Ստրազպուրկը Իր Աջակցութիւնը Յայտնեց Հայաստանին. Եռագոյնը Ծածանեցաւ Քաղաքապետարանի Շէնքին Վրայ



*Այսօրուընէ Ստրազպուրկի քաղաքապետարանի շէնքին վրայ պիտի ծածանի Հայաստանի դրօշը՝ ի նշան համերաշխութեան Հայաստանի եւ հայ ժողովուրդին հետ:*

*Նոյեմբեր 24-ին դրօշի բարձրացման հանդիսաւոր արարողութեան մասնակցեցան Եւրոպայի խորհուրդի Հայաստանի մշտական ներկայացուցիչ, դեսպան Արման Խաչատրեանը, Ստրազպուրկի քաղաքապետ Ժաննա Բարսեղեանը, քաղաքային խորհուրդի անդամ, Հայաստանին աջակցելու վերաբերեալ բանաձեւի հեղինակ Փիեռ Եաքուպովիչը եւ այլ հրաւիրեալներ:*

*Խորհրդանշական այս քայլը նախատեսուած էր Ստրազպուրկի քաղաքային խորհուրդին կողմէ Նոյեմբեր 7-ին միաձայն ընդունուած բանաձեւով, որ յստակ կը դատապարտէ Ատրպէճանի ռազմական յարձակումը Հայաստանի վրայ, կոչ կ'ուղղէ՝ խաղաղութեան հաստատման եւ կը նախատեսէ աջակցութիւն բարեկամ Հայաստանին:*

## Հալիս Եըլտըրըմի «Վարդան» Դառնալու Պայքարը




*Երկար տարիներէ ի վեր Գերմանիա բնակող Հալիս Եըլտըրըմ ցանկութիւն ունեցաւ իր երբեմնի հայ արմատներուն վերադառնալու: Ան քաղաքացիութեան դիմում կատարելէ ետք Գերմանիոյ իշխանութիւններուն դիմում կատարեց իր մեծ քեռիին անունը՝ Վարդանը ստանալու համար: Հանդիպած թղթաբանութիւններէն ետք որոշեց դատ բանալ գերմանական իշխանութիւններու դէմ, առարկելով իրմէ պահանջուած 400 Եւրօ հարկին համար: «Եթէ պահէի իմ թրքերէն անունս, կամ եթէ գերմաներէն անուն մը նախընտրէի նման պահանջ մը պիտի չունենայի: Նոյնպէս պիտի չպահանջէին իմ հայ ծագումը փաստելը: Բարեբախտաբար այդ նիւթով օգնութեան հասաւ «Ակօս»ի մէջ իմ ստորագրութիւնով ելած «Հարազատներս կը փնտռեմ» ծանուցումը: Պատմեցի նաեւ ընտանիքիս պատմութիւնը, որ կը հասնի մինչեւ ցեղասպանութեան տարեթիւը: Մեծ մեծ մայրս Պեսի այդ դաժան շրջանին վերապրած մը ըլլալով մնացած է իր ծննդավայրը՝ Երզնկայի Թերճան գաւառը: Հինգ տարի անց իր աւագ եղբայրը Վարդան կորսուած քոյրը փնտռելու համար կ'երթայ Երզնկա, ուր տակաւին Թերճան չհասած կը սպաննուի: Ահա այդ մեծ մօրեղբօր քաջութենէ ոգեւորուելով որոշեցի իր անունով յիշուիլ: Այդ եղելութիւնները տան մէջ միշտ քօղարկուելով խօսուեցաւ, որոնց մասին աւելի յստակ լսեցի հօրենական կողմէ մեծ մօրս բերնէն, որ արդէն հարսն էր Պեսի մեծ մօրս: Մեծ մայրս ապրած էր, այն մտավախութեամբ թէ իր կեանքը կապուած է հայ ինքնութիւնը քօղարկելուն:*

*Գերմանիա հաստատուելով քաջութիւնը գտայ բուն ինքնութիւնս վերահաստատելու: Ընտանիքի անդամներ ունիմ թէ ծննդավայրս եւ թէ Եւրոպայի զանազան երկիրներու մէջ: Կորիզային ընտանիքս կը քաջալերէ իմ այս կեցուածքը:*

*Պունտեստակ թէեւ պաշտօնապէս ճանչցած է հայոց ցեղասպանութիւնը, բայց նահանգային հանրապետութիւնները այնքան ալ չեն գիտակցիր Պունտեստակի որոշման էական նշանակութեան: Այժմ իմ տարած իրաւական պայքարը այդ գիտակցութեան Պավարիայի հանրապետութեան մէջ ալ ճանաչում գտնելուն ուղղուած է»:*

## Կիւմրիի Մէջ Յաջորդ Տարի Տեղի Պիտի Ունենայ Երկրաշարժի Տարելիցին Նուիրուած Համերգ Վլատիմիր Սփիւաքովի Մասնակցութեամբ




*Կիւմրիի Սեւ Բերդ ամրոցին մէջ 2023 թուականին տեղի պիտի ունենայ Սպիտակի աւերիչ երկրաշարժի 35-ամեայ տարելիցին նուիրուած մեծ համերգ՝ աշխարհահռչակ ջութակահար, խմբավար Վլատիմիր Սփիւաքովի մասնակցութեամբ:*

*Կիւմրիի Վարդան Աճեմեանի անուան դրամատիկական թատրոնին մէջ կայացաւ Սփիւաքովի համերգը, որուն ամբողջ հասոյթը պիտի փոխանցուի «Ջինուորի տուն» վերականգնողական կեդրոնին: Համերգին հնչեցին հատուածներ փոթր Զայքովսքիի «Եւկենի Օնեկին» օփերայէն, «Կարապի լիճը» եւ «Մարդուկ-Ջարդուկը» պալետներէն, Արամ Խաչատրեանի «Դիմակահանդէս» տրամայէն:*

*Սպիտակի աւերիչ երկրաշարժէն յետոյ՝ 1989 թուականի Մարտին, յայտնի ջութակահար Վլատիմիր Սփիւաքովը առաջինն էր, որ այցելող կիւմրեցին բերաւ դասական համերգի:*

# Տէրսիմ



ՅԱՍՄԻԿ ԳՐԻԳՈՐԵԱՆ

«Մութ ամպեր էին երկնքում, արեւն անհետացել էր այլեւս...ժողովուրդը յուսահատ էր ու անօգնական. նախ հաւաքեցին ու ձերբակալեցին նշանաւորներին՝ գրագէտ մարդկանց՝ գլուխը կտրեցին մարմնից... Այդ օրը արեւ չծագեց, եկեղեցիների զանգերը չղօղանջեցին...Մունզուրը ներկուեց արիւնով... Իմ տատը երկնքում տեսաւ ինքնաթիռներ, որ երբեք չէր տեսել ու ռումբեր... Ընտանիքներ քանդուեցին, կանայք՝ իրենց պատիւը պահելու համար, նետուեցին ժայռերից, ուրիշները փախան քարանձաւներ ու ամիսներով սնւում էին միայն ցորենով՝ առանց ջրի, մայրերի կրծքերից կաթ չէր հոսում: Շատ ընտանիքներ բնաջնջուեցին, նախքան երբեւէ նորից հանդիպելը: Որբ աղջիկներին որդեգրեցին ընտանիքներ, որոնց հաւատալիքներն ու մշակոյթը նրանց օտար էր, բայց նրանց ազնիւ արիւնը շարունակում էր հոսել նրանց երակներում: Ահա՝ թէ ինչու մենք երբեք չենք ժպտում, ու մեր ողբից անցեալի հոտ է գալիս... Մեր ողբն այսպէս վերածուեց խռովութեան, մեր ողբից դառը հոտ է գալիս...»:

**ԿԱՐՕ ՕԼԿԱՐ**
**1938 թուականի Տէրսիմի կոտորածների վերյուշը**

*Տէրսիմն իմ կեանք «ներխուժեց» ու մէկընդմիշտ հաստատուեց շատ անսպասելի, «լոքդաունի» նախօրէին, ՖԲի էջից՝ Կարօ Օլկար անունով պոլսաբնակ մեր հայրենակցի հաղորդումներից, որ շատ պատահական աչքովս ընկան ... Նախախնամութիւն էր երեւի՝ քորոնավիրուսի հետեւանքով արգելափակումներից ու տանը «բանտարկուելուց» խենթանալու փոխարէն առիթ ունէի ժամերով հիանալ: Երկիր մոլորակի այս հրաշալի, մինչ այդ ինձ անյայտ, այնքան մօտիկ ու այնքան հեռու անկիւնով, որը ոչ շատ հեռու անցեալում մեր հայրենիքի մի կտորն էր, այժմ Թուրքիայի Թունճելի մարզն է՝ վերանուանումը 1936 թուականից է: Նրա գեղագեղ լեռնային համայնապատկերներն բազմաթիւ էին Կարոյի էջում: Մակագրութիւնները, բացատրութիւնները թուրքերէն էին: Տեքստերը հասկանալու համար դիմում էի GOOGLE  ին, թէեւ թարգմանութիւններն երբեմն ընդհանրապէս հասկանալի չէին: Փորձեցի Տէրսիմի պատմութեան մասին տեղեկութիւններ փնտռել հասանելի աղբիւրներում՝ հանրագիտարաններում, հայ ժողովրդի պատմութեան ակադեմիական հատորներում: Զարմանքով հաշուարկեցի, որ դրանք երկու էջ էլ չեն կազմի:*

*Օգնութեան եկան մի շարք գիտական եւ ընդհանրական յօդուածներ որոնք, որոշակի յամառութիւն գործադրելու արդիւնքում, կարելի է գտնել համացանցում:*

*Տէրսիմը պատմական Հայաստանի Ծոփաց աշխարհն է, որի հիւսիսում՝ Եկեղեաց գաւառում էին գտնւում Անահիտի, Միհրի եւ Արամազդի տաճարները: Ինձ անասելի գրովեց այն, որ 79 դարերում Պավլիկեաններից շատերը հետապնդումներից փախել, պատսպարուել են Տէրսիմի անառիկ լեռներում: 19րդ դարում Տէրսիմի հայ բնակչութեան կողքին ապրել են ալեւիները , քրտական տարբեր ցեղեր: Նրանք հայերի հետ միասին քանիցս ենթարկուել են տեղահանումների եւ կոտորածների: Թուրքական կառավարութիւնը իրեն յատուկ ոճով հայերի դէմ է լարել այլազգիներին, երբեմն՝ յաջողելով, երբեմն՝ անարդիւնք: Տէրսիմի վերջին կոտորածը տեղի ունեցաւ 1938ին: Սպանուեցին տասնեակ հազարաւոր տէրսիմցիմեր, մի մասը արտագաղթեց Եւրոպա:*

*Կարօն՝ առանց վերապահութեան, Տէրսիմի անցեալի կորուսեալ համբաւը տարածող, նրա սուգն անող ու Տէրսիմը դոյզն ինչ հայացնելու յոյս տածողն է: Արեւն կանչը նրան հանգիստ չի տալիս արդէն հինգ տասնամեակից աւելի, այնքան՝ ինչքան ապրում է նա:*

*Պոլսի Գարակէօզեան որբանոցի հինգ դասարանի տուած կրթութիւնը նա լրացրել է դժուար կեանքի դասերով, մտապահելով, յաճախ նաեւ թղթին տալով այն բոլոր պատմութիւնները, որ լսել է տարբեր մարդկանցից, որոնք վերաբերում են Տէրսիմին, իր ընտանիքին: Անմիջական ու լսելի են այդ տխուր, տառապալի պատմութիւնները: Դրանք ունկնդրին դնում են փակուղու մէջ, ու շնչահեղձ մտածում ես՝ ի՞նչ ուժ, մղում, կամ՝ թէ՝ հաւատք պէտք է ունենայ մարդը, որպէսզի այդքան փորձանքներից յետոյ ցանկանայ ապրել ու շարունակի ապրել եւ հիմնականում՝ այն միջավայրում ու մարդկանց շրջապատում, որոնք, եթէ մասնակցութիւն չեն ունեցել,*

Շար.ը էջ 19

# Իտալիոյ Մէջ ՀՀ Դեսպանը Շնորհակալութիւն Յայտնած է Իտալացի Լրագրողին 44-Օրեայ Պատերազմին Իրական Փաստերը Ներկայացնող Ֆիլմին Համար



*Իտալիոյ մէջ Հայաստանի դեսպան Ծովինար Համբարձումեանը Հռոմի մէջ կազմակերպուած միջոցառման ժամանակ շնորհակալութիւն յայտնած է իտալա-արաբական «Ասատաքա» կեդրոնին՝ հայանպաստ գործունէութիւն ծաւալելու համար:*

*Դեսպան Համբարձումեանը մասնաւորապէս բարձր գնահատած է միջոցառման ներկայ իտալացի լրագրող Սթեֆանիա Պաթիսթինիի գործունէութիւնը: Վերջինս 44-օրեայ պատերազմէն յետոյ այցելած էր Հայաստան ու Արցախ եւ փաստավաւերագրական ֆիլմ պատրաստած էր՝ պատմելով Արցախի մէջ հայկական պատմական ու մշակութային ժառանգութեան մասին, ներկայացուցած էր պատերազմի ընթացքին ատրպէյճանական կողմի վայրագութիւններն ու անոնց հետեւանքները:*

*«Անոր կատարած աշխատանքն անչափ կարեւոր է: Ես գիտեմ, որ Սթեֆանիան Միլանէն է, սակայն ան գրեթէ երբեք չի գտնուիր Միլանի մէջ: Փոխարէնը զայն կարելի է տեսնել թէժ կէտերու մէջ, ինչպիսիք են Արցախը, Աֆղանիստանը, ուր վտանգուած են մարդկային կեանքեր: Ան մարտիկ է, իսկ այսօր արհեստավարժ լրագրութիւնը անոր նմաններուն կարիքը շատ ունի», նշած է Իտալիոյ մէջ ՀՀ դեսպանը:*

*Ան մասնաւորապէս խօսած է իտալացի լրագրողին ցուցաբերած քաջութեան մասին, որ իր կատարած աշխատանքով փորձեց կոտրել միջազգային հանրութեան անտարբերութիւնը. «44 օր շարունակ Լեռնային Ղարաբաղը կրակի տակ էր, կրակի տակ յայտնուած էին բնակելի տուները, դպրոցները, հիւանդանոցները, ծննդա տուները, կանայք ու երեխաները, իսկ աշխարհը լուռ էր: Սթեֆանիա Պաթիսթինին այն քիչերէն էր, որ չլռեց: Ան իտալական հանրութեան, Իտալիոյ մէջ եւ անոր սահմաններէն դուրս, «RAI 1»-ով պատմեց այն ամէնը, ինչ կը կատար ուէր Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի մէջ, փոքրիկ երկրի մը մէջ, որ արդէն 30 տարիէ կը պայքարի յանուն ազատութեան, յանուն ժողովրդավարութեան եւ յանուն կեանքի իրաւունքի»:*

*Սթեֆանիա Պաթիսթինին շնորհակալութիւն յայտնած է պարգեւին համար եւ նշած է, որ իրեն համար պատիւ էր Հայաստանի մէջ կատարել այդ աշխատանքը: «Մասնաւորապէս կը փափաքիմ շնորհակալութուն յայտնել, քանի որ դուք ինծի առիթ ընձեռեցիք այդ աշխատանքը կատարելու մեծ ազատուտութեամբ, ինչ որ միշտ չի պատահիր, որովհետեւ, յարձակման ենթարկուած երկիրը յաճախ ինքն իր մէջ կը պարփակուի»,ըսաւ ան՝ շեշտելով «ազատ լրագրութեան» կարեւորութիւնը, կրկին շնորհակալութուն յայտնելով իրեն վերապահուած այդ մեծարանքին համար:*


## ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ

**ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ**
**(200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)**
**1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104**

**ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝**
**ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680**

## Կոստանդին Մեծի Եւ Տրդատ Մեծի Խորհրդաւոր Հանդիպմանը Նուիրուած Ցուցահանդէսը Բացառիկ Նմուշներով Այցելուներին Կը տանի Անցեալ




«Կոստանդին Մեծ եւ Տրդատ Մեծ. հայ-հռոմէական դաշինքը պատմութեան մէջ եւ պատկերներում» խորագրով ցուցահանդէսը ներկայացնում է մ. թ. 4-րդ դարասկզբին առաջին քրիստոնեայ կայսր Կոստանդին Մեծի եւ Հայոց առաջին քրիստոնեայ թագաւոր Տրդատ Մեծի հանդիպումը, նրանց պետութիւնների միջեւ կնքուած «սիրոյ եւ միաբանութեան» դաշինքը, որը, անցնելով դարերի միջով, հարստացել է զանազան պատումներով, նկարազարդուել է եւ ի վերջոյ սրբագնացուել:

Ցուցահանդէսը, որը կազմակերպուել է Հայաստանի Հանրապետութեան եւ Իտալիայի Հանրապետութեան միջեւ դիւանագիտական յարաբերութիւնների հաստատման 30-ամեակի առթիւ, բացուեց Նոյեմբերի 23-ին Մաշտոցեան մատենադարանի թանգարանային մասնաշէնքում:

Արուեստաբան, ցուցադրութեան համադրող Գայեանէ Բաբայեանի խօսքով՝ ցուցադրութեան մէջ ներառել են երկու առաջնորդների հանդիպմանը վերաբերող նիւթեր՝ Մատենադարանի հաւաքածուի 13-18-րդ դարերի ձեռագիր մատեաններ, տպագիր գրքեր, ինչպէս նաեւ Նոր Ջուղայի եկեղեցիներում պահուող եւ պատմական հանդիպումը պատկերող արուեստի եզակի նմուշների մեծադիր վերատպութիւններ:

«Փորձել ենք գրաւոր աղբիւրներում պահպանուած տեղեկութիւնները համադրել պատկերների հետ, որ հասկանալի լինի, թէ պատկերագրօրէն թեման ինչ զարգացում է ունեցել: Կարծում եմ՝ դա այցելուներին կ՚օգնի աւելի ընկալուել ցուցադրութեան միջավայրի, տրամադրութեան ու ժամանակի մէջ»,-նշեց նա՝ ցուցանմուշներից առանձնացնելով Բաշեղում ընդօրինակուած 16-րդ դարի յայտնի ժողովածուն, որն ունի այս թեմայով ստեղծուած մեզ յայտնի առաջին մանրանկար պատկերը:

Ցուցադրութիւնն ուղեկցւում է տեսահոլովակով. ներկայացւում են Մխիթարեան միաբանութեան Վենետիկի եւ Վիեննայի մատենադարաններում, Վատիկանի առաքելական գրադարանում, Վերսալի պալատական այգում, Ամստերդամի թանգարանում եւ Հռոմի եկեղեցիներում առկայ՝ թեմային առնչուող այլ նմուշներ եւ ստեղծագործութիւնների թուային պատկերներ:

Միջոցառման գիտական ղեկավարներից Նազենի Ղարիբեանն ասաց՝ առաջին անգամ է այս թեմայով ցուցադրութիւն կազմակերպւում ոչ միայն Հայաստանում, այլեւ առհասարակ հայագիտական միջազգային շրջանակներում: »Թեման նոր չէ: Հաւանաբար հարիւր տարի գիտնականները, հայագէտները տարբեր կարծիքներ են յայտնել նիւթի պատմականութեան մասին: Արդեօք այդ հանդիպումը պատմական եղելութի՞ւն է, թէ՞ յօրինուած, սակայն թեման մնացել է գիտական փակ շրջանակում: Մենք փորձեցինք հանրութեան լայն շրջանակի ուշադրութիւնը բեւեռել այս փոքրիկ, բայց մեծ դրուագի վրայ«,-նշեց Ղարիբեանն ու յիշեցրեց, որ առաջին անգամ Ագաթանգեղոսն է յիշատակել այս հանդիպման մասին, իսկ յետոյ բոլոր պատմական աղբիւրներն անխտիր յղում են կատարել հայ-հռոմէական դաշինքին եւ հանդիպմանը, որը զարգանալով եւ տարբեր տարրեր ներառելով՝ 11-րդ դարից ի վեր դառնում է Հայաստանի երազների, ազատագրման, պետականութեան ու դիւանագիտական յարաբերութիւնների հաստատման գործիք:

Միջոցառման գիտական ղեկավարներից Վահէ Թորոսեանի խօսքով էլ դաշինքը դարերի ընթացքում լրացուեց, հարստացուեց, կերպափոխուեց եւ օգտագործուեց հայկական պետութեան արտաքին քաղաքականութեան համար, այնուհետեւ՝ ազատագրական պայքարում, սակայն ամենահետաքրքիր դրսեւորումները գտաւ կիլիկեան շրջանում, երբ դաշինքի վերաբերեալ սեղմ գիտելիքը վերածուեց հսկայական փաստաթղթի:

«Բագրատունեաց թագաւորութեան անկումից յետոյ մեր իշխանական տների մի մասը տեղափոխուեց Կիլիկիա, այնտեղ ստեղծուեց իշխանութիւն եւ խաչակրաց արշաւանքների բերումով ֆիզիքապէս սահմանակցեց կաթոլիկ աշխարհի եւրոպական պետութիւնների հետ եւ արդէն 12-րդ դարավերջին, երբ հասունացել էր թագաւորութիւն հռչակելու պահը, կրկին անհրաժեշտութիւն առաջացաւ վեր հանել 4-րդ դարասկզբին կնքուած դաշինքը՝ կերպափոխուած, քանի որ Կոստանդինին պէտք է փոխարինէին եւրոպական գահակալները, Տրդատին՝ Լեւոն Մեծագործը: Հարստացնելով այդ

Շար.ը էջ 19

## Սպանիոյ Առաջին Հայկական Եկեղեցւոյ Մէջ Անդրանիկ Պատարագ



Կիրակի՝ Նոյեմբեր 27-ին Պէնալմատէնա գաղաքի մէջ կառուցուած Սպանիոյ առաջին հայկական եկեղեցւոյ մէջ Արեւմտեան Եւրոպայի Հայրապետական Պատուիրակ, Խաժակ Արքեպս. Պարսամեան մատուցեց անդրանիկ Սուրբ եւ Անմահ Պատարագը:

Արարողութեան իրենց մասնակցութիւն բերած էին Սպանիոյ Հայ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ եւ Հայրապետական Պատուիրակի փոխանորդ Հոգշ. Շնորհք Աբղյ. Սարգսեանը ու Արժշ. Թադէոս Ա. Քհնյ. Գէորգեանը:

Պատարագի սկիզբը Խաժակ Սրբազան կատարեց վէմքարի օծումը, որպէսզի մինչեւ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ձեռամբ, առաջիկայ գարնան եկեղեցւոյ ամբողջական օծումը, կարելի ըլլայ ամիսը երկու անգամ պատարագ մատուցանել:

Սուրբ պատարագին ներկայ էին եկեղեցւոյ հիմնադիրներ, բարերարներ եւ մեծ թիւով Պէնալմատէնա, Մալակա, Մարպէլյա եւ Սէվիլյա քաղաքներու մէջ բնակութիւն հաստատած հայեր: Մատրիտ քաղաքէն եկած էին նաեւ ՀՀ Սպանիոյ մօտ դեսպան Տիար Սօս Աւետիսեանը իր տիկնոջ եւ Հիւպատոսի հետ:

Իր քարոզին մէջ Խաժակ Սրբազան իր գնահատանքը յայտնեց Հայր Շնորհքին, Եկեղեցւոյ բարերար եւ եկեղեցական խորհուրդի ատենապետ Տիար Ռաֆայէլ Բատալեանին, նաեւ բոլոր բարերարներուն, հիմնադիրներուն եւ եկեղեցական խորհուրդի անդամներուն: Յիշեցնելով ներկաներուն Սուրբ Գրիգոր Լուսաւորչի կոչը, ըսաւ. «Ինչպէս 303 թուականին եւ ամբողջ մեր պատմութեան ընթացքին Հայ Եկեղեցւոյ նուիրեալ զաւակները կատարեցին իրենց առաքելութիւնը, այսօր ալ մենք պէտք է շարունակենք կառուցել լուսոյ խորաններ, եկեղեցիներ՝ պահելու եւ բազմացնելու համար մեր հոգեւոր, ազգային ու մշակութային գանձերը»:

Պատարագի վերջաւորութեան եկեղեցւոյ բակին մէջ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:



# Աշնանային Գոյները «Փոքրիկ Հրեշտակներ» Շաբաթօրեայ Դպրոցում

«Աշուն է, անձրեւ…
Ստուերներն անձեւ
Դողում են դանդաղ…
Պաղ, միապաղաղ
Անձրեւ՜ ու անձրեւ …»:

**Վահան Տէրեան**



ԱՆԱՀԻՏ ԱՄԻՐԵԱՆ

*Այս տխուր եւ մելամաղձոտ տրամադրութիւնը ստեղծում է աշունը՝ տարուայ աներեւակայելի գեղեցիկ եղանակը: Աշնանային գունեղ պատկերներն ու բազմազանութիւնը տեսնելու համար պարզապէս պէտք է միայն շուրջը նայել եւ զմայլուել բնութեան կախարդանքով: Բնութիւնը կարծես հրճւում ու խաղում է՝ փոխելով իր հանդերձանքը դեղին, կանաչ, կարմիր եւ շագանակագոյն երանգների: Աշնանային այդ երանգներն ու գոյներն էին դրսեւորուել «Փոքրիկ Հրեշտակներ» շաբաթօրեայ դպրոցի 3րդ դասարանի աշակերտների աշխատանքներում:*

*Հարկ է նշել, որ դպրոցը գործում է Արեւմտեան Թեմի առաջնորդ Յովնան արք. Տէրտէրեանի հայրական օրհնութեան ներքոյ, իսկ դպրոցի տնօրէնն է՝ Յովհաննէս սարկաւագ Գումրույեանը:*

*Դասի թեման տարուայ խայտաբղէտ այս եղանակն էր:*




*Դպրոցականներից իւրաքանչիւրն իր աշունը պատկերել էր իւրովի, սակայն գերիշխողը վառ գոյներն էին եւ դասարանում տիրող ջերմ ու տաք տրամադրութիւնը:*

*Սփիւռքի տաք աշնանը սովոր աշակերտներն այնքան իրական էին պատկերել աշունն իրենց աշխատանքներում, որ կարծես մի կտոր նախշուն աշուն մտել էր դասասենեակ:*

*Ոսկեղենիկ աշնան հեքիաթը կարծես շարունակւում է աշակերտների պաստառներում. ձայնի, գոյների համադրութիւնը մի տեսակ թափանցիկ պար է բռնում անձրեւի, քամու ու տերեւների մեղմ պտոյտի հետ ու ստեղծում ամբողջական անձեռակերտ պատկեր: Երեխաների նկարագարդուած աշունը չկրկնուող ու պայծառ է, ուր ծորում է բազմազան գոյների խաղը, կաթկթում անձրեւի գուլալ արցունքը, լսւում հեռաւոր հայրենիքից կանչող քամու սուլոցը:*

*Ուր որ է կը ցրտի, ուր որ է կը հանգչի պատուհանների լոյսը, կը մարի աշնան վերջին արեւը, բայց պաստառներից ճառագող լոյսն ու տաքութիւնը երկա՜ր կը ջերմացնի մեզ ու մեր հոգու անկիւնը…*



# Եթէ 2022-ի ՀԱՊԿ Գագաթնաժողովում

Շարունակուած էջ 2-էն

*վերաբերեալ Սերժ Սարգսեանը ժամանակին պնդում էր, թէ պայմանաւորուածութիւն է ձեռք բերուել շփման գծում խաղաղութեան ամրապնդման մեխանիզմների ներդրման շուրջ, որից յետոյ միայն հնարաւոր կը լինի անցնել բովանդակային բանակցութիւնների: Ալիեւն էլ պնդում էր, որ դրան զուգահեռ հայկական կողմը պէտք է որոշ տարածքներից զօրքեր դուրս բերի: Մոսկուայում ԱԳ նախարարների հանդիպման վերաբերեալ Նալբանդեանը պնդում էր, որ քննարկել են խաղաղութեան ամրապնդման պայմանաւորուածութիւնների կատարումը, Մամեդյարովն էլ պնդում էր, թէ իր մօտ «տպաւորութիւն է ստեղծուել», որ «խաղաղութիւն հնարաւոր է զօրքերի դուրս բերման կամ տարածքների դիմաց: Վերջին 12 տարիներին բանակցութիւնների տրամաբանութիւնը հենց դա է: Դիւանագիտութիւնում գոյութիւն չունեն «բանակցութիւններ յանուն բանակցութիւնների»:*

*Ամփոփելով՝ նշենք, որ թերեւս Աշոտեանը վերանայի իր գնահատականները ՀՀ «դիւանագիտական յաղթանակների» մասով, քանի որ դրանք եթէ անգամ յաղթանակներ են, ապա միայն թղթի վրայ, դրանք բարի ցանկութիւնների մակարդակից կեանքի չկոչուեցին: Աւելին՝ այդ յաղթանակների յուղարկաւորումը տեղի է ունեցել յեղափոխութիւնից առաջ՝ իր կուսակցի 2018-ի ապրիլեան յայտնի ելոյթով՝ «բանակցային գործընթացը ուղղակի կանգնած է», «մինչ այս փուլը մենք բոլոր հնարաւոր միջոցները ձեռնարկել ենք, որպէսզի բանակցային պրոցեսում ձեռք բերուած պայմանաւորուածութիւնները որոշակի կայունութիւն ունենան եւ հիմք հանդիսանան բանակցութիւնները յաջողութեամբ աւարտելու համար: Բայց, ցաւօք սրտի, ոչ միայն կոնկրետ Լեռնային Ղարաբաղի խնդրի շուրջ գոյութիւն ունեցող փաստաթղթի շուրջ բանակցութիւններում, այլեւ վստահութեան որոշակի միջոցներ ստեղծելու, հրադադարի ռեժիմը պահպանելու եւ այլ հարցերով մեր հանդիպումները եւ բանակցութիւններն ընդհանրապէս որոշ ժամանակ յետոյ պարզւում են, որ անտեղի են, որովհետեւ մեր գործընկերները պայմանաւորուածութիւնները չեն պահում»:*

*«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»*

# ԶՊՄԿ-ն ֆինանսաւորել է

Շարունակուած էջ 7-էն

*ֆինանսաւորելու մասով, մերժել եմ», - մեզ հեզ զրոյցում ասաց Բարսեղեանը:*

*Նա նշեց, որ «Հանրային դիւանագիտութիւն» ՀԿ-ի՝ ԶՊՄԿ-ի կողմից ֆինանսաւորուելու մասին տեղեկացել է 2022-ի կէսերին: «2019-ին ՀԿ-ի տնօրէնն ինձ ասել է, որ այդ գրքի ֆինանսաւորումը կատարւում է գրանտների շնորհիւ: Ես էլ չեմ խորացել, թէ ինչ գրանտներ են: Ինչ վերաբերում է էկոակտիւիզմին, ես լուսանկարիչ եմ, նկարահանումներ եմ անում ու աշխատում է բազմաթիւ կազմակերպութիւնների, հիմնարկների հետ, իսկ էկոակտիւիզմն իմ անձնական նախաձեռնութիւնն է, ես դրա համար ոչ մէկից ուղղակի կամ անուղղակի չեմ վարձատրուել», - ասաց Հայկ Բարսեղեանը:*

*Այսպիսով, մեզ հետ զրուցած անձինք չեն հերքում, որ փաստացի եկամուտ են ստացել ԶՊՄԿ-ից, միեւնոյն ժամանակ, այս կամ այն կերպ բացատրում են զուգահեռաբար խոշորագոյն հանքարդիւնաբերողի հետ համագործակցելու եւ բնապահպանական ակտիւիզմի, մասնաւորապէս, մէկ այլ հանքարդիւնաբերողի գործունէութեան դէմ պայքարելու փաստը:*

*Ի դէպ, վերջին օրերին կառավարութիւնը կրկին ակտիւացել է Ամուլսարի հանքի շահագործման թեման:*

*Այս տարուայ Հոկտեմբերի 6-ին Civilnet.am-ի հետ զրոյցում էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբեանը նշեց, որ Ամուլսարի թեման չի կարելի որակել ոչ ակտուալ. «Մենք ինտենսիւ աշխատում ենք, որպէսզի գործարկուի, ներդրողների եւ պրոյեկտի բաժնետերերի հետ հանդիպում ենք, յաջորդ շաբաթ էլ մեծ պատուիրակութիւն է գալու, եւ հիմա լուծում ենք ֆինանսաւորման հետ կապուած խնդիրները եւ կարծում եմ, մինչ տարուայ կէսերից, յամենայն դէպս այսպիսին է պլանը, կը սկսի աշխատել»:*

*Այնուհետեւ Civilnet.am-ը տեղեկութիւն հրապարակեց, որ Կապան համայնքի Շահումեանի ոսկի-բազմամետաղային հանքավայրը շահագործող «Ջաարատ Կապան» ընկերութեան մայր ձեռնարկութիւնը բանակցութիւններ է վարում Ամուլսարի ոսկու հանքավայրը ձեռք բերելու ուղղութեամբ:*

*Շրջակայ միջավայրի նախարար Յակոբ Սիմիդեանն էլ ԱԺ-ում լրագրողների հետ զրոյցում նշել էր, թէ տեղեակ չէ Ամուլսարի շահագործման որոշումից. «Լիդիանը, ճիշտ եմ չէ՞ անունն ասում, կազմակերպութիւն է, որը թոյլտւութիւններն ունի եւ ինքն է որոշում՝ ոնց է շահագործելու, չի շահագործելու…»:*

## Մահացած է Լուդովիկա Այնթապլեանը



*Ամբողջ կեանքը հայութեան խնդիրներով եւ անոնց լուծումներ ապահովելու պայքարով ապրած Լուդովիկան, իր մահկանացուն կնքած է Երեւանի մէջ՝ յետ կարճատեւ հիւանդութեան: Ան իր հայրենանուէր ամուսնոյն՝ Բժիշկ Յակոբ Այնթապլեանի կողքին նուիրուած էր արեւմտահայերէն Թեքումով դպրոցի մը եւ այլ ծրագիրներու հովանաւորութեան եւ բարգաւաճման գործին:*

*Հանգուցեալին յուղարկաւորութիւնը տեղի ունեցած է Էջմիածին քաղաքի Ս. Շողակաթ եկեղեւոյ մէջ, Շաբաթ, 12 Նոյեմբերին:*

## Ցաւակցական

*ՍՈՆԻԱ ԿԻՒԼՎԱՐԴԵԱՆԻ մահուան տխուրառիթով Նոր Սերունդ Մշակութային Միութիւնը իր խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի դուստրին Մանիա Արշակունիին, թոռներուն ծոռներուն եւ համայն պարագաներուն:*

## Փասատենայի Հայ Եղբայրութեան

Շարունակուած էջ 8-էն

*Նարօտ Էքմէքճեանի եւ Պրն. Յակոբ Սաֆարեանի սրնգի կատարողութիւնը, մրցանակակիր՝ պատանի Անտրու Պօլտիի դաշնամուրային կատարողութիւնը, Տաղլեան ընտանիքի երաժշտական անսամպլը եւ ապա եկեղեցիի լարային ու սրինգի նուագախումբի կատարողութիւնը խմբավարութեամբ՝ Մարտիրոս Պարութճեանի:*

*Իր բարձրացուցած աղօթքին ու մաղթանքին մէջ, եկեղեցւոյ երեց հովիւ՝ Վեր. Վաչէ Էքմէքճեան առ Աստուած շնորհակալութիւն յայտնեց եկեղեցիին 50 տարիներու առաքելութեան, անոր ռահվիրաներու անսակարկ նուիրումին համար, ինչպէս նաեւ շեշտեց եկեղեցիին ապագայի տեսլականի կարեւորութիւնը, որպէսզի ՀԵԱԵ-ն շարունակէ գաղութիս անհատներու եւ ընտանիքներու կեանքէն ներս տարածել Քրիստոսով փրկութեան Բարի Լուրը եւ մնալ կեանքերու փոփոխութեան համար Ջահակիր հոգեւոր ընտանիք մը:*

*Փառքը՝ Աստուծոյ եւ Անոր անսահման օրհնութիւնները՝ Հայ ազգին:*

*ՆԵՐԿԱՅ ՄԸ*

## Կոստանդին Մեծի Եւ Տրդատ Մեծի

Շարունակուած էջ 7-էն

*դաշինքի մասին գիտելիքը՝ այն դարձրինք արտաքին քաղաքականութեան դոկտորին»,-պատմեց Թորոսեանն ու յաւելեց՝ Կիլիկեան թագաւորութեան անկումից յետոյ դաշինքը չմոռացուեց ու նոր դրսեւորումներ գտաւ ազատագրական պայքարում՝ դառնալով դրա հենքը:*

*Ցուցահանդէսի շրջանակում հրատարակուել է պատկերագիրք, իրականացւում է աշխատաժողով, որի ընթացքում հայաստանեան եւ օտարերկրեայ մասնագէտները զեկոյցներ են ներկայացնում Կոստանդին Մեծի եւ Տրդատ Մեծի հանդիպման ու դաշինքի աւանդոյթին առնչուող տարբեր հարցերի վերաբերեալ:*

*«Կոստանդին Մեծ եւ Տրդատ Մեծ. հայ-հռոմէական դաշինքը պատմութեան մէջ եւ պատկերներում» ցուցահանդէսն իրականացւում է Մատենադարանի, «Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամի հետ համատեղ եւ Հայաստանում Իտալիայի դեսպանատան աջակցութեամբ:*

**Norayr Daduryan Armeno-Turkish Translation Services**

From Armeno-Turkish to Armenian and English languages.
Bring your family's history back to life!
Family letters, postcards, diaries, and more...
Please reach out for quotes
Website: norayr.daduryan.com
Email: norayrdaduryan@gmail.com

## Մահացած է Լիբանանահայ Մտաւորական՝ Ժիրայր Դանիէլեանը

*Ցաւով իմացանք որ վերջերս Պոսթոնի մէջ, իր մահկանացուն կնքած է սփիւռքահայ յայտնի մտաւորական, գրող եւ մանկավարժ Ժիրայր Դանիէլեանը:*

*Հանգուցեալը՝ եղած է Պէյրութի Հայկազեան Համալսարանի գրադարանի վարիչ, հեղինակ է բազմաթիւ հրատարակութիւններու: Եղած է Հ.Բ.Ը.Մ.ի Պէյրութի Դարուհի Յակոբ Երկրորդական Վարժարանի տնօրէն:*

*Պէյրութի նաւահանգիստի պայթումին հետեւանքով մեծապէս վնասուած էր իր տեսողութիւնը եւ դարմանումի համար փոխդրուած էր ԱՄՆ:*

*Վերջին շրջանին ան ստանձնած էր Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հայագիտութեան գրասենակի վարիչի պաշտօնը: Ան հայոց լեզուի այցելու ուսուցիչ էր նաեւ Պիքայայի դպրեվանքի սաներուն՝ հիմնադիրն էր «Կամար հնդէսին:*

*Բիւր յարգանք մեծ մտաւորականի վաստակին:*

*«ՄԱՍԻՍ»*

## Տէրսիմ

Շարունակուած էջ 16-էն

*ապա առնուազն լուռ ականատեսել են պետական ոճիրը ...Կարոյի պատմութիւնները թէեւ վաւերագրական են, սակայն էպոսի հնչեղութիւն ունեն: Միայն թէ նրա «էպոսում» առայժմ չարն է շարունակում յաղթել...:*

*Ծնուել է Տէրսիմում՝ Խաչիկ Պոյաճեանի՝ Պօզոյի Խաչոյի եւ Ասլհանի ընտանիքում: Խաչօն 1915ի օրհասին ընտանիքից միակ փրկուածն էր: Մայրը՝ Ասլհանը հօրից փոքր էր 28 տարով: Ծնողներն 12ամեայ աղջկան շտապել էին ամուսնացնել, որպէսզի այլազգու բաժին չդառնայ՝ «Թուրքերը չփախցնեն»: Ընտանիքում 11 երեխայ էր ծնուել, որոնցից հինգը մեծացան, դարձան հասուն, ընտանիք կազմեցին: Մայրը անխոնջ ծառայեց ընտանիքին, ուրիշների համար մաքրութուն անելով, ուտեստներ պատրաստելով: Մանկատանն անցկացրած տարիներին Կարօն միայն երեք անգամ կարող էր տեսնել մօրը, մնացեալ ժամանակը մօրը հանդիպելու երազանքով էր տառապում, որն այլեւս հիւանդութիւնն էր: Պայմանների սղութիւնն էր պատճառը, որ Կարօն չշարունակեց ուսումը, սակայն իմաստուն ու իմաստասէր լինելու համար միշտ չէ, որ համալսարաններ ու ակադեմիաներ են անհրաժեշտ:*

*Յակոբ Մնձուրու անուան կողքին Տէրսիմն ինձ համար զուգորդւում է: Կարոյի հետ, որ ամայի դաշտում, որտեղից ասես՝ ծիլ տուած յոյս է, դէպի ո՞ւմ ձգւում են հայկական արմատներ իրենց մէջ փնտռող ալեւիները, քրտերը:*

*Կարօն զարմանում է ազգային կոյր քաղաքականութեան վրայ. որպէսզի հայի յետնորդը հայ ճանաչուի, պարտաւոր է Աստուածաշնչի վեց ամսուայ կուրսեր անցնի ու միայն այս ճանապարհով եկեղեցու համաձայնութիւնը ստանայ, որն իր հերթին կը բարեխօսի Հայաստանի համապատասխան մարմիններին այս խնդրի վերաբերեալ:*

*Հէյ, ձայն եմ տալիս, 22րդ դար, հայալեզու չինովնիկներ, դուք գիտակի՞ց էք:*

*Բոլորովին վերջերս Կարօ Օլկարը պէյրութաբնակ տէրսիմցիների ժառանգների հրաւէրքով եղաւ Պէյրութում, պատմեց իր՝ Տէրսիմ կատարած ամենամեայ այցելութիւնների մասին : Հանդիպումները ջերմ էին եւ արդիւնաւէտ: Նրանք պիտի շարունակուեն: Հայրենադարձութիւնն ու արմատներին՝ վերադարձը սկսւում է նաեւ այսպէս:*

*«ԱԿՕՍ» Պոլիս*

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

**Yes, I wish to subscribe to Massis Weekly**
**Enclosed a check for (one year)**
*** $50,00 * $100,00 (first class) for USA**
**$ 125,00 (Air Mail) for Canada.**
**$ 250,00 (Air Mail) Overseas.**

**Name:** ------------------------------------------

**Address:** ------------------------------------

**City:** --------- **State:**--------- **Zip Code:**------

**Country:** --------------

**Tel :**------------------------

**Email:** --------------------------

## Իրանը Պահանջած է ԱՄՆ-ի Հաւաքականը Հեռացնել Աշխարհի Բաժակէն




| | TEAM | GP | W | D | L | GF | GA | GD | PTS |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | ENGLAND | 2 | 1 | 1 | 0 | 6 | 2 | 4 | 4 |
| 2 | IRAN | 2 | 1 | 0 | 1 | 4 | 6 | -2 | 3 |
| 3 | USA | 2 | 0 | 2 | 0 | 1 | 1 | 0 | 2 |
| 4 | WALES | 2 | 0 | 1 | 1 | 1 | 3 | -2 | 1 |

Իրանի ֆութպոլի ֆետերացիան ՖԻՖԱ-էն պահանջած է Աշխարհի Բաժակէն հեռացնել ԱՄՆ-ի հաւաքականը, Իրանի արժանապատուութեան դէմ գործողութիւններու համար:

ԱՄՆ-ի ֆութպոլի ֆետերացիան պաշտօնական էջերուն վրայ խմբային փուլի աղիւսակին Իրանի դրօշը զետեղած էր առանց պետական զինանշանի՝ խորհրդանշական աջակցութիւն յայտնելով Իրանի մէջ մարդու հիմնական իրաւունքներու համար պայքարող կանանց:

## Մպափէն Հաւասարեցաւ Մեսիին Աշխարհի Բաժակի Ընթացքին Կոլերու Քանակով



Դանիայի հաւաքականի դէմ խաղին (2:1) երկու կոլի հեղինակ դառնալու շնորհիւ փարիզեան ՊՍԺ-ի եւ աշխարհի ախոյեան Ֆրանսայի հաւաքականի 23-ամեայ յարձակող Կիլիան Մպափէն Աշխարհի Բաժակներուն նշանակած կոլերու քանակը հասցուց 7-ի եւ այս ցուցանիշով հաւասարեցաւ Արժենթինի հաւաքականի եւ ՊՍԺ-ի 35-ամեայ յարձակող Լիոնել Մեսիին, որ 5-րդ անգամ է որ կը մասնակցի Աշխարհի Բաժակին:

Մպափէն 7 կոլը նշանակած է 9 խաղի ընթացքին, Մեսին՝ 20 խաղի:

## Ռոնալտու. Աշխարհի Բաժակներուն 5 Անգամ Մասնակցիլը Նուաճում է, Որու Մասին Երբեք Չեմ Համարձակուած Երազել



Փորթուկալի հաւաքականի 37-ամեայ յարձակող Քրիշտիանու Ռոնալտուն ընկերային ցանցերուն վրայ կատարած գրառումով անդրադարձած է իր 5-րդ մասնակցութեանը Աշխարհի Բաժակի աւարտականներուն:

«Աշխարհի Բաժակներուն հինգ անգամ մասնակցիլը, որու մասին երբեք չեմ համարձակած երազել, բայց այս նաեւ ապացոյցն է, որ անհնար ոչինչ չկայ:

Հպարտ եմ, որ կը ներկայացեմ Փորթուկալը եւ ուրախ եմ, որ ամէն կոլս կը նուիրեմ իմ երկրին եւ ժողովուրդին: Ամէն ինչ դեռ նոր կը սկսի»,- գրած է Ռոնալտուն:

Ան պատմութեան մէջ միակ ֆութպոլիստն է, որ կոլ կը նշանակէ 5 Աշխարհի Բաժակի աւարտականներու ընթացքին:

## Պենզեման Կը Ստանայ Մետալ, Եթէ Ֆրանսան Դառնայ Լաւագոյն Եռեակի Մէջ

Ֆրանսայի հաւաքականի վնասուածքներ ստացած խաղցողներ Քարիմ Պենզեման ու Լուկաս Էրնանտէսը կը ստանան մետալներ, եթէ Տիտիէ Տեշամի գլխաւորած խումբը կարողանայ հասնիլ Աշխարհի Բաժակի եզրափակիչ կամ նուաճէ պրոնզէ մետալներ, կը հաղորդէ RMC Sport-ը:

ՖԻՖԱ-ն Ֆրանսային կը յանձնէ 26 մետալ եզրափակիչ յայտացուցակի խաղացողներու թիւով:

Ֆրանսայի հաւաքականը խմբային փուլին երկու յաղթանակէն յետոյ առաջինն է եւ նուաճած 1/8 եզրափակիչի ուղեգիր:

## Վան Գալ. Լաւ Խաղ Չցուցադրեցինք, Էքուատորը Գերազանցեց Մեզ

Ֆութպոլի Հոլանտայի հաւաքականի գլխաւոր մարզիչ Լուի Վան Կալը մեկնաբանած է Էքուատորի խումբի հետ 1:1 արդիւնքով հաւասարութիւնը Աշխարհի Բաժակի խմբային փուլի երկրորդ հանգրուանի խաղին:

«Մենք լաւ խաղ չցուցադրեցինք: Առանց գնդակի լաւ կը խաղայինք, բայց գնդակով արդիւնաւէտ չեղանք: Այս խնդիրը նկատուած էր նաեւ առաջին խաղին: Մենք չյաջողեցանք բոլոր մենապայքարներուն: Գնդակը քիչ կը վերահսկէինք, իսկ առանց անոր հնարաւոր չէ մօտենալ մրցակիցի դարպասին: Արագ կը կորսնցէինք գնդակը եւ չլուծեցինք խնդիրը:

Էքուատորը գերազանցեց մեզ: Ես գգուշացուցած էի, որ Էքուատորը Սենեկալէն ուժեղ կ՚ըլլայ: Մենք փաստակեցանք 1 կէտ մեզմէ ուժեղ մրցակիցի հետ պայքարին», ըսած է Վան Գալի:

## Էրիկ Իսրայէլեանը՝ Երիտասարդներու Աշխարհի Ախոյեան



Էրիկ Իսրայէլեանը տպաւորիչ յաղթանակով նուաճեց երիտասարդներու աշխարհի ախոյեանի տիտղոսը:

Սպանիոյի մէջ աւարտող բռնցքամարտի աշխարհի երիտասարդական առաջնութեան Հայաստանի ներկայացուցիչ Էրիկ Իսրայէլեանը 60 քկ ծանրութեան եզրափակիչին 5:0 արդիւնքով յաղթեց Վրաստանի ներկայացուցիչ Գոչա Գորդուլաւային:

18-ամեայ բռնցքամարտիկը բոլոր երեք ռաունտերուն մեծ առաւելութեամբ մենամարտեցաւ եւ մրցակիցին որեւէ հնարաւորութիւն չտուաւ:

Կիսեզրափակիչին Եւրոպայի երիտասարդներու գործող ախոյեանը 5:0 արդիւնքով յաղթած էր անգլիացի Նելսոն Պիրչարիին:

## Էլմիրա Կարապետեանը Ոսկի Եւ Արծաթէ Մետալներ Նուաճած Է Լեհաստանի Մէջ




Վրոցլաւի մէջ կայացած հրաձգութեան Լեհաստանի բաց առաջնութեան մասնակցած են նաեւ Հայաստանի ներկայացուցիչները:

Երեւանցի Էլմիրա Կարապետեանը ատրճանակով 10 մեթրէն վաստակած է 578 միաւոր եւ նուաճած է ոսկի մետալ:

Փարիզի Ողիմպիական խաղեր ուղեգիր նուաճած Էլմիրա Կարապետեանը Բենիկ Խլղաթեանի ընկերակցութեամբ խառն մրցաձեւի մէջ, 290+284 կէտերու ընդհանուր գումարով գրաւած է երկրորդ տեղը:

Ատրճանակի մրցումներուն Բենիկ Խլղաթեանը 580 կէտով երկրորդ տեղը գրաւած է:

Հրաչեա Բաբայեանը հրացանով 10 մեթրէն վաստակած է 625, 5 կէտ եւ երրորդ արդիւնքով մտած է եզրափակիչ: Վճռական հանգրուանին Հրաչեա Բաբայեանը զէնքի հետ կապուած թեքնիք խնդիր ունեցած է եւ դուրս մնացած է պայքարէն:

## Մեսիի Ներկայացուցիչը Հերքած Է ՄԼՍ Տեղափոխման Մասին Լուրերը

Արժենթինի հաւաքականի յարձակող Լիոնել Մեսիի ներկայացուցիչ Մարսելօ Մենտեսը հերքած է լուրերը, թէ 35-ամեայ ֆութպոլիստը իր ասպարէզը պիտի շարունակէ միանալով ամերիկեան «Ինթեր Մայամիի» կազմին:

«Մեսիի տեղափոխութեան վերաբերեալ ոչ մէկ բանակցութիւն չէ եղած: Լուրերը, թէ ան յաջորդ մրցաշրջանին հանդէս պիտի գայ «Ինթեր Մայամի» խումբէն սուտ են»,- Մենտեսի խօսքը կը մէջբերէ CNN-ը:

Անգլիական The Times-ը գրած էր, որ Մեսին ազատ կարգավիճակ ունենալով յաջորդ ամրան կը միանայ «Ինթեր Մայամիին», որու համասեփականատէրն է անգլիացի Տեւիտ Պեքհըմը:

## Եան Վերտոնկէն. Վատ Կը Յարձակինք, Քանի Որ Ծեր Ենք

Պելճիգայի հաւաքականի եւ պելճիգական «Անտերլեխտի» 35-ամեայ պաշտպան Եան Վերտոնկէնը մեկնաբանած է Մարոքոյի խումբէն կրած 0:2 արդիւնքով պարտութիւնը Ա,շխարհի Բաժակի խմբային փուլի խաղին:

«Երկու նմանօրինակ կոլ բաց թողեցինք դիրքերէն, երկու դէպքերուն ալ մօտակայ դարպասաձողի մօտ: Կոլեր, որոնք այդպիսի դիրքերէն երբեք պէտք է չըլլան: Հիմա ունիմ շատ մտքեր, որոնք հրապարակային չեն: Չեմ կարծեր, թէ մենք առանձնայատուկ պահեր ստեղծեցինք: Հաւանաբար՝ խնդիրն այն է, որ մենք վատ կը յարձակինք, քանի որ ծեր ենք: Մորոքքոն այսօր մեզմէ լաւ խաղցաւ: Այդ շատ կը տխրեցնէ», ըսած է Եան Վերտոնկէն: